

Galata, Constantinople

Ծաղկաւոր

Թէլը, որ այսօր գրեթէ բոլոր ժողովրդաց զխաւոր ըմպելին դարձած է, ա՛յնքան բաղաժաթիւ տեսակներ ունի որ, որդարեւ գործածողներուն համար բաւական դժուար է լուրջ անութիւն մը ընել: Այդ տեսակներէն մասնք նշանաւոր են իբր անորժանամ եւ քաղցրաբոյր, մասնք ալ թէեւ նոյնքան խորժելի համար հոտ չունին, գերազանց են սակայն իբր կաշի դուրիչ եւ զօրացուցիչ. վերջապէս իւրաքանչիւր թէյ իբր ուրոյն յատկութիւններն ունին օրոնք զինքը կը զանազանեն ուրիշ, տեսակներէ:



Սակայն կայ թէյ մը, որ այդ յատկութեանց ամէնէն կարեւորները կը միացնէ իր վրայ. այսինքն՝ գոյն, համեւն եւ մանուշագ կաշի դուրիչ եւ զօրացուցիչ տնջօրգական ազդեցութիւն մը. եւ այդ թէյն է ձաբոն Գի քէյը, որ այդ յատկութեանց շնորհիւ կը յարմարի ամէն տարիքի ու կազմութեան. ամէն կլիմայի եւ եղանակի եւ ամէն ճաշակի:

Եւստրուեան եւ Իսապուլեան քէյի մեծ վաճառատունը, իր բաղաժաթիւ յաճախորդաց ծառայութիւն մը մատուցանելու համար, այս անգամ մեծաքանակ ներածած է ճարձակ տեսակի թէյ մասնաւոր եւ իսկական աւափերով ու կը հրաւիրէ օգտուել այս առիթէն բոլոր տնային, որ կը փոփաքին ունենալ թէյ մը:

Համով, հոսով, առողջապահիկ եւ կազդուրիչ:
Սոյն վաճառատան մէջ կան նաեւ հնդկական, չինական, Սէյլան եւ Ճավայի մանուշակ տեսակ թէյեր:
2 - 10
Ուտարուքիւն մարգալի

ՏՈՔԹ. Բ. ԷՄԻՐՁԷ

Հանրածանօթ մանուկաբու եւ կնիւտաբան (gynécologue), Տօքթօր Էմիրզէ որ 15 տարուան գործունէութեամբը մեծ հաջողութեամբ է, կը ծանուցանէ յորդոյ յաճախողներուն թիւ բնակարանի փոխադրած է Պէքեար փողոց թիւ 18. Բաց ի վերայիշեալ իւր մասնագիտութենէ կը բուժէ նաեւ նորագոյն մէթաստերով ջղային եւ հոգեկան ու երեւակայական մէկն տեսակ հիւանդութիւնները, ինչպէս նէվրոսթէնի եւ tic անբաւականած ալքիերիսի եւ ուսերու ազդեղ եւ ակամայ շարժումները եւ դաշտանի դաղորդման յոռաջ եկած ջղային խռովումները եւ երիտասարդական մալիքները, ինչպէս նաեւ գինեմալիքը, մօրիֆնամալիքը եւսլլն, Կիրակիներէն զատ ամէն օր կէսօրէն սկսեալ մինչեւ երեք ժամ հիւանդ կընդունի, եւ ուրբաթ օրերը ձիորար կը դաւամէ վկայեալ աղքատները, 2—10

ԳՈՐԾԱՐԱՆ

Գորգի մաքրութեան եւ նորոգութեան (Գրասենեակ՝ Մահմաւ - փաշա, Թարազը - լար, Մեծ Նոր Խանի կից, Թ. 37)
Այս հանրածանօթ գործարանին մէջ կը մաքրուին աղտոտած եւ փոշոտ թէ՛ մետաքսէ եւ թէ՛ բարդէ ամէն տեսակ ընտիր գորգեր, քիմիական դեղորէից միջոցաւ, առանց որ եւ է որքան կամ հեռք ձգելու: Ընդհակառակը, բոլորովին նոր երեւոյթ մը կ'առնեն այս գործարանին մէջ մաքրած գորգերը:
Ունի նաեւ առաւելութիւն մը նոր գորգերու վրայ, այն է թէ՛ այս գործարանին մէջ մաքրած գորգերը դերձ կը մնան ցեցերու (կիւղէ) կեր ըլլալէ:
Կը նորոգուին նաեւ օրեւէ կերպով վնասուած գորգեր:
Սոյն գործարանը կը ստանձնէ նաեւ պատրաստել նոր գորգեր, ինչ մեծութեամբ ու ճաշակով որ ուզուի:
Թանձնարարութիւնը պէտք է ուզուի գրասենեակը:
Գիւրամատչելի պայմաններ:
2 - 10

CAISSE PATERNELLE

ՔԷՍ ԲԱԴԵՌՆԵԼ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԻՄՆԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1841 ԻՆ

ԿԸ ԳՈՐԾԷ ՖՐԱՆՍ. ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀՍԿՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ ՀԱԿԱԿՇՈՒՆ ՏԱԿ

Սկիզբէն ի վեր ապահովագրեալներու եղած վնարում 300 միլիոն ֆր.
Սկիզբէն ի վեր արձանագրեալ ապահովագրութիւնք 700 միլիոն ֆր.

ԸՆԹԱՑԻԿ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԻՖ ՖՐ. 85,000,000

ԴՐԱՄԱԴՂՈՒԽ ԵՒ ՊԱՀԵՍՏ 62,750,000

Ուրեմն ընթացիկ ապահովագրութեանց գումարին վրայ պահեստի համեմատութիւնն է 74% օրով ՔԷՍ ԲԱԴԵՐՆԵԼԻ ընծայած երաշխաւորութիւնը գեր ի վեր կը հանդիսանայ ուրիշ ընկերութեանց ցոյց տուած երաշխաւորութեանց:

Ընկերութեան վարչական Խորհուրդը կազմուած է Ֆրանսայի ամէնէն նշանաւոր դրամաւէրներէն. ինչպէս

Մ. ՌԸՆԷ ՊՐԻՍ, Արեւմտեան Ֆրանսայի երկաթուղեաց ընկերութեան եւ Քրէտի Լիօնէի վարչական Խորհրդոյ անդամ.

Մ. ՄԱՐԲԻ ՏԸ ՖԼԷՌ, Դրամաւոր անդիք ընկերութեան վարչական Խորհրդոյ անդամ.

Մ. ԿՈՄՍ ՏԸ ՍԷՆ ԿԻԼԷԻՄ, նախկին գանձապահ.

Մ. Օ. ՄՍԶԸՐԱ, Ընդհ. Տնօրէն Քրէտի Լիօնէի.

Թուրքիոյ Տնօրէն Փ. ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

Պալիս, Սուլթան-Համամ, Բասաֆ Քաթրէնդուլու

Ընկերութեան վրայ տեղեկութիւն առնելու համար դիմել Քրէտի Լիօնէի.

ԾԱՆՕԹ.— Շահաւոր դիրք պիտի տրուի այն ֆենիչից որ կարեւոր արդիւնք մը ի բազմաթիւ քաջ տնօրէնութեամբ:

2—10

ԱՂԱՄ ՎԱՐԴԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Ամեն քեսակ քոհաֆիյէ ապրանքաց

Սեւ-Շուկայ, Գերբէններու դրան կնք, Թ. 41—43

Նշանակէ, արանց եւ կանանց ճաշակաւոր հովանոցներու վաճառատուն. Պալիս, Սուլթան-Համամ, Միախլի Դրամատան դէմ թիւ 58:

Սոյն երկու վաճառատուններուն մէջ գտնուած ապրանքները, թէ՛ թօհաֆիյէի վերաբերեալ եւ թէ՛ արանց ու կանանց յաւանքի հովանոցներ, իրենց գեղեցկութեան կը միացնեն տեղանութիւն, եւ դիւրամատ չելի գիններու առաւելութիւնն ալ կ'ընծայեն հասարակութեան:

Աղամ վարդեան մեծապէս գահ թողւոցած է իր բազմաթիւ յաճախորդները:

Կարծէ որ Շուկայ ելլող ամէն ընտանիք այցելէ անգամ մը այս երկու վաճառատունները՝ եղանակին պէտքերը հագալու համար:

2—10

ՏՕՔԹ. Ե. ՄԱՍԻՍ

ԲԵՐԱ ԹԱԳՍԻՄ ՓՈՂՈՑ ԹԻԻ 12

Ամէն տեսակ ներքին հիւանդութիւններէ զատ, մասնագիտաբար եւ երկար տարիներէ ի վեր կը դարձանէ օտոմաքսի, աղեաց, միզային ճանքաներու հիւանդութիւնները, ջրային տկարութիւնները, հին եւ նոր գլխակաւ խտերը: Այս վերջին խտերը՝ առանց օտոմաքսի խանգարման եւ նորագոյն մեթոտներով կը բուժէ կարճ միջոցի մէջ:

Հիւանդ կընդունի ամէն օր կէս օրէ վերջը: Զարեքլաթի օրերը միայն ճրի: 2—10

Հիւանդութեանց դէմ ապահով է եթէ իր մէջը հիգտնութի շիշ մը



SCOTT'S EMULSION

(ԸՍԳՕԹԻ ԲԵՂԱԴԻՌՈՒԹԻՈՒՆ)

Թոքախտ, պրծնշտ, հաղ, հարբուխ և բարակացաւ, և տղայոց անդամներու թուլութիւն, խոլ (սըրածա) և բոլոր արեան աղետներու համար անգին դարման մըն է: Առաջին անգամ առնուելով բժշկելու կ'ըսկի և կը շարունակէ: Ամէն տարի հազարաւոր տղայք մահուանէ աղատելու կը ծառայէ: Հիւանդութիւններէ վերջը կորսուած զօրութիւնը կը վերականգնէ, և աչքերու փայլունութիւնը ետ կը բերէ և մարմնոյ կեանք կուտայ: Գեղերու մէջ նոր հրաշք մըն է, և ուտելիքներու նկատմամբ ալ հրաշք մըն է: Ս'իշտ վրան այս պատկերով վարդագոյն փաթեթի մը մէջ կը գտնուի:

Հիշերու վրայ ասոր ուշադրութիւն ընել պէտք է:

Բոլոր բեղաւորները և բեղաւորները և Երեւան:

ՅԱՄԱՔԱՅԻՆ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԾԱԳՈՅՆ ԱՊԱՅ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ՎԻՔԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ ԱՊԱՅՈՎԱԳՐԱԿԱՆ ԱՄԷՆ ԴՐՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՈՐԾԱԴԻՐԷ

Ունի կեանքի, օժիշի, արկածի, ցմահ բոցակի ճիւղեր
VICTORIA ՎԻՔԹՈՐԻԱ ՏԸ ՊԵՐԼԷՆ կեանքի ապահովագրութիւններ ունի թէ՛ բժշկական քննութեամբ եւ թէ առանց բժշկական քննութեան
DE Առանց բժշկական քննութեան եղած կեանքի ապահովագրութիւններ
BERLIN բուն վճարումները շաբաթական մասնավճարներով տեղի կունենան, սկսեալ 5 շաբաթէն զատ չեն կարող ընդհատուիլ:

Ապահովագրեալ գումար 1903ին Ֆր. 1,325,000,000

Պահեստի դրամ 1903ին » 510,000,000

Հաստատուած 1853 սեպտ. 20ին արտ. ակտին հիմնով արտադրուելու և ուղղակի կառավարութեան հսկողութեան ներքին:

ԸՆԿ. ԴՐՄԱՏՈՒՆՆԵՐԸ

Օսմ. Կայսր. Պանքա

և Բրէտի լիոնէ

Լիպգոր Բնդի. Ներկայացուցի ՄԻՀՐԱՆ ՍԻՆԷՄ ԳԱԼՖԱՅԵԱՆ

Պոլիս. Բարբրեքոյու խան

Տեսուչ

ՅԱՐՈՒԹԻՒՆ Մ. ՔԵՉԷՃՅԱՆ

Գրառութեան և տպագրութեան գործարար 1-50

ՄԱՍԻՆ

54^{րդ} ՏԱՐԻ, Զ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 2

5 ՄԱՐՏ 1905

ՀԻՆԵՆ ՈՒ ՆՈՐԵՆ

«Աղքատասէր» ու «Աղքատախնամ» բառերը թէև իրարու հոմանիշ, տարբեր պատկերացումներ կը բերեն մեր աչքին առջեւ, մէկը յատկացուած ըլլալով գեղեցիկ սեռին բարեսիրական գործունէութեանը՝ մինչ միւսը այրերուն միայն կը պատկանի, երկուքն ալ, այս ձմեռ, իրենց ամէնէն լայն առումին մէջ գտնուեցան իրականապէս ու արդիւնաւորապէս, և երբ Բերայի Տիկնանց Աղքատասէրը իր ազնուապետական պարահանդէսը կը սարքէր Բերա-Բէլէսի սրահներուն մէջ, անդին՝ Իզմիր՝ ոչ նուազ շնորհալի Աղքատասէրներ կը կազմակերպէին երեկոյթ մը որ տեսակին մէջ առաջինը ըլլալու առաւելութիւնը ունի, գէթ Պոլսոյ համար։

Տեսած կամ լսած էինք, արդարեւ, մեր շուրջը, որ խումբ մը Տիկնանք ու Օրիորդներ հանդէս մը կազմակերպեն, — նուագի ու մոգական լապտերի հանդէս մը, — կոյրերուն, խուլերուն, համբերուն, անդամալոյծներուն համար, Իզմիրի Աղքատասէրին անդամուհիները յղացեր ու գործադրեր են այս եղական ու գերազանցապէս մարդասիրական գաղափարը, Միջազգային Փօլէճի սրահները լեցուեր են խուռն բազմութեամբ, առաջնութիւնը ընծայուելով բնութեան բարիքներէն զրկուողներուն, և մինչ կոյրերուն համար նուագածութիւն կը կատարուէր, յատկապէս, խուլ—համբերուն համար մոգական լապտերի պատկերացումներ կը ցուցադրուէին։

Բարիքը գործել միմիայն բարիքին համար, և նիւթական նպաստին հետ՝ հետամուտ ըլլալ զբօսանքի միջոց մը, առիթ մը գտնելու այն բաղադրուկներուն որոնց յատ-

կացուած է հանդէսը, ահա՛ ինչ որ կը յատկանշէ Իզմիրի Աղքատասէրին անդամուհիներուն ցայգատունը։

Մինչև մէկ աստիճան՝ այդ հանդէսին հետ կրնայ զուգակշռութեան դրուիլ երաժշտական ցերեկոյթը, — կամ բուն բառովը՝ Նուագահանդէսը, — որ պիտի տրուի այս տեղ Մարտ 26ին, Ազգ. Հիւանդանոցին ինպաստով և անդի, այդ հանդէսէն նպաստաւորութիւններուն մէջ կը գտնուին կոյրեր և խուլ—համբեր ալ, բաց ի ջլախտաւորներէն, թոքախտաւորներէն, ծերունիներէն, Այս բոլոր դժբաղդներուն վիճակին ամօքում մը կ'ընծայէ Հիւանդանոցին տարեկան Նուագահանդէսը, որ այլեւս մեր գեղարուեստական բարքերուն և մեր բարեսիրական սովորոյթներուն մաս կը կազմէ։

Ինչ պիտի ըլլայ այս անգամուան յայտագիրը. վերջին պահուն միայն պիտի իմանանք. բայց, ինչպէս ամէն տարի կ'արտայայտուի, փափագը ընդհանուր է որ հնարեղածին չափ չատ թուով հայ արուեստագէտներ ու արուեստասէրներ մասնակցին անոր, երիտասարդներ ու աղջիկներ հաւասարապէս, 1904ի Նուագահանդէսին, հայ օրիորդ մը դաշնակ ածեց ու հայ երիտասարդ մըն ալ երգեց. միւս բոլոր մասնակցողները և րոպացի էին, զորս քիչ չատ քօնսէռի վարձուող մը կը տեսնէ ու կը լսէ ամէն ատեն, ինչու չաւելնայ մերկներէն մասնակցողներուն թիւը, երգող ու նուագող միանգամայն երկու սեռէն, Միթէ չուրիք գեղեցիկ ու կիրթ ձայնի տէր կամ լաւ դաշնակ զարնող օրիորդներ, որոնց բնածին ու արուեստագի-

տական յատկութիւնները իրենց սալօններուն չորս պատին մէջ կը սահմանափակուին: Զարմանալին հոն է որ, իւնիօնի սրահին մէջ յատ աւելի թուով Հայուհիներ կը մասնակցին, ամէն ձևով, գեղարուեստական երեկոյթներուն քան մեր Նուագահանդէսին, — միակը ամբողջ տարուան մէջ՝ մեր համայնքին համար, որ սակայն լաւագոյն աօրթը կ'ընծայէ հայ տաղանդներու փթթումին ու քաջալերանքին:

Յովսէփ — Իզմիրեանց գրական մրցակալարաշխութեան օրերը կը մօտենան, երկամեայ մոռացումէ մը ետք որու միջոցին Պատրիարքարանի Պաշտօնական Մանուցումը միայն կուգայ յիշեցնել զայն մեզի պարբերաբար, լրագրական քանի մը լուրերու հետ որոնք կիմացեն որ և է երկասիրութեան մը պատրաստուած կամ պատրաստուելու վրայ ըլլալը: Այս անգամ, սակայն, օգտուելու կարգը գաւառացի բանասէրներուն է կամ գաւառային բանասիրութեան ու բառագիրութեան:

Մանրամասնութիւնները այնչափ յիշուցան օրաթերթերուն մէջ որ աւելորդ է կրկնելը:

Գաւառացի բանասէրները, լեզուախոյզները, բառաքննողները պէտք ունէին այս տեսակ քաջալերանքի մը, նոյն իսկ զուտ մտաւորական կամ բարոյական տեսակէտէն դատելով, թէ և տրուելիք նիւթական վարձատրութիւնն ալ արհամարհելի բան մը չէ: Եթէ կը գտնուին ատեն ատեն քննադատներ որոնք կը հեգնեն օրաթերթերուն գաւառային թղթակիցները, կամ գաւառի անկիւնը հասնիլ փորձող սկսնակ բանաստեղծները, անկեղծապէս խօսելով՝ գաւառը փոխադարձաբար կուտայ մեզի գրագէտներ, բանաստեղծներ ու բանասէրներ որոնց գնահատում միայն կը պարտինք և ամէն խրախուսանք: Անոնք, այդ յաջողածները, — թէ և մատի վրայ կը համրուին, — մայրաքաղաքի գրագէտին, բանաստեղծին ու բանասէրին առաւելութիւնները լիովին վայելելու դիւրութիւնը չունին բնականաբար, միջավայրին միօրինակութեան

հետեւանքով. և սակայն, ժամանակին հետ կ'ընթանան, աւելցնելով իրենց զարգացումն ու մտաւորական պայարը, ագնուացնելով իրենց ճաշակը, եւ առանձնայատուկ դրօշ մը տալով իրենց ոճին ու գրելու եղանակին: Ատեն մը, զուլալ ջուրերէն, խաշնարածին երգէն, նահապետական սովորոյթներու նկարագրութիւններէն ու հէքեաթներէ անդին չէին անցներ. այսօր զգալի տարբերութիւն մը ունին, նիւթերու ճոխ պէսպիսութիւն մը կը ցուցադրեն եւ լայն անջրպէտ մը թողած են իրենց ետին: Ասոնք յաջողալներն են:

Սկսնակներն ու նորավարներն ալ պէտք չէ արհամարհել: Առանց գաւառ գացած ըլլալու, գործով կամ ուսման հումար Պոլիս եկողներէն, այցելողներէն դատելով, նոյն իսկ միջակ կարողութեան տէր կամ իրենց նախափորձերուն մէջ գտնուող պատանիները՝ ի յայտ կը բերեն գրականութեան ու բանաստեղծութեան համար խանդավառում մը, պաշտում մը որ Պոլսեցի պատանիին քով կը պակսի: Իսկ գաւառին մէջ մնացող, տեղէն չի շարժող գրասէր պատանին՝ դատելով իր նամակներէն զորս կուղղէ խմբագրութեանց, պիտի գտնէք իր չափաւորութեան գիտակից, համեստ, խոնարհ տղայ մը որ կըզգայ իր ընդգրկելիք նիւթին մեծութիւնը ու կատարելիք աշխատանքին դժուարութիւնը, եւ գրելով կարնախափորձերու մէջ կը խարախփի, չի քաշուելով այդ մտաւորական խարխալանքը խոստովանելէ:

Տեսած եմ ասոնցմէ շատերը, երբ հոս կը կանչուին հօր մը կամ հօրեղբօր մը կողմէ, վաճառատան գործերուն աջակցելու համար: Պոլիս հասնելուն, իրենց տրամագրելի ժամերուն մէջ առաջին փափագնին կ'ըլլայ Հիւանդանոցը տեսնել, յետոյ Պատրիարքարանը, Ղալաթիոյ եկեղեցին, Բերան ու խմբագրատուններն այն թերթերուն որոնց հետ հաղորդակցութեան մէջ եղած են գաւառէն, իբրեւ բաժանորդ կամ աշխատակից: Այս այցելութիւններու միջոցին՝ ծանօթ դրագէտներու մասին հարցումներ ուղղելէ ետքը, թէ ո՛ւր կը նստին, ինչպէ՞ս կարելի է հանդիպիլ անոնց, ինչո՞ւ յաճախ չեն գրեր, եւ

այլն, խօսքը կը դառնայ գաւառի գրակա-
նութեան ու ... քիչ մըն ալ իրենց վրայ,
եւ հոս է որ կը ներկայանայ ուսումնասի-
րութեան ու հետաքրքրութեան նիւթը. երի-
տասարդը որ նստած է դէմդ, խմբագրական
գրասեղանին հանդէպ, ձեռագրի տետրակ մը
ունի գրպանը, արձակ գրութիւններու կամ
ոտանաւորի, զոր երկչոտ շարժումով մը կը
հանէ. թէեւ կիսկատար, անխնամ հատուած-
ներ պարունակէ տետրակը. բայց գրողին
խօսելու ձեւը, որ խոստովանանք մըն է
գրեթէ իր տքնութիւններուն, իր մտքի թար-
թափումներուն, իր անքուն անցուցած գի-
շերներու աշխատանքին, կարեկցութիւնով
խառն համակրանք մը կ'արթնցնեն ներսի-
դիդ. այդ տղոցմէն տասնին ինը միշտ չի
յաջողած մը պիտի մնան, բայց մէկը, գո'նէ
մէկը կրնայ անուն մը շինել իրեն, ապագա-
յին, ու գաւառացի գրագէտ մը դառնալ որ
իր միակ փառասիրութիւնը կը կազմէ:

Գաւառացի յաջողած բանասէրներուն,
գրագէտներուն ընծայուած խրախուսանքը
իր բարերար ներգործութիւնը կունենայ նա-
եւ նորահաս կամ յաջորդ սերունդին վրայ.
որ դեռ պատանի է այնօր:

Մասիսի 1904 դեկտեմբեր 4ի թիւը նուի-
րած էինք Իգմիրի գրագէտ Առաջնորդին որ
նոյն շաբթուն կ'ուղեւորէր իր պաշտօնատե-
ղին: Անկէ ի վեր սահած երեք ամիսներու
միջոցին, Դուրեան Սրբազան՝ իր պաշտօնին
գլուխը անցած՝ առանց աղմուկի, առանց
խօսեցնել տալու իր վրայ, կը վարէ իր հով-
ուական աշխատութիւնները որոնց կը միա-
նայ նաեւ կրթականն ալ: Իբր քարոզիչ,
իբր գրչի տէր ու իբր վարչագէտ եկեղեցա-
կան, Դուրեան Սրբազան յարմարագոյն ընտ-
րելին էր Իգմիրցիներուն համար որոնք, փայ-
լուն ընդունելութիւն մը ընելով անոր, այս
առթիւ կատարուած եկեղեցական հանդէսնե-
րէն ու արտասանուած բանախօսութիւննե-
րէն ետքը, հիմայ՝ գործի վրայ կը տեսնեն
զինքը և որչափ աւելի ժամանակ անցնի՝
այնքան աւելի առիթ պիտի ունենան գնա-
հատելու անոր մտաւոր կարողութիւններն
ու հոգեկան ձիրքերը:

Ուրիշ երկու նորընտիր առաջնորդներ,
Տ. Ներսէս եպիսկ. Ասլանեան և Տ. Մուշեղ
Մ. Վրդ., յաջորդաբար գացին ստանձնել


հովուական պաշտօններ՝ մէկը Տրապիզոն,
միւսը Ատանա: Ասլանեան Սրբազան, գաւա-
ռային պաշտօններու մէջ երկարամեայ փոր-
ձառութիւն ստացած եւ յօժարակամ փութա-
ցած ուր որ կոչուած է, իր քիչ մը խիստ՝
բայց անկեղծ բնաւորութեամբը յարգանք ու
պատկառանք կ'ազդէ իր այցելած բոլոր
տեղերը, եւ պատճառ մը չիկայ որ Տրապի-
զոնցիք, — որոնք առաջին անգամը չէ որ կը
ճանչնան զինքը, — գո'ն չմնան իրմէ. եւ փո-
խադարձաբար:

Մուշեղ վարդապետ, համակրելի Արմա-
շականը, կոչուելով Կիլիկիոյ ամէնէն ընդար-
ձակ թեմին՝ Ատանայի՝ առաջնորդութեան,
իրականապէս պերճախօս հաստատութիւն մը
կը գտնէ այն գնահատման որ հեռուէն թէ
մօտէն կ'արտայայտուի իր նկատմամբ, սկսե-
լով այն թուականէն ուր դեռ շատ երիտա-
սարդ ու նորընծայ վարդապետ՝ կը թողուր
Դպրեմանքը Կ. Պոլիս գալու համար: Իր
առաջին հովուական պաշտօնավարութիւնը
Արաբկիրի նման հեռաւոր միջավայրի մը
մէջ ուր գնաց՝ տակաւին անիորձ եկեղե-
ցական, հետզհետէ ի յայտ բերաւ իր բնածին
կարողութիւնը եւ ուշիմութիւնը զոր եկե-
ղեցասիրական ու կրթասիրական զգացում-
ներ կ'արդիւնաւորէին: Բայց Մուշեղ վար-
դապետ, վարելով հանդերձ իր առաջնորդու-
թիւնը, գրչի մարդը մնաց միանգամայն,
գրական լուրջ աշխատակցութիւն մը նուի-
րելով իր նախասիրած թերթերուն, եւ հրա-
տարակելով հատորներ աւելի հմտութիւնը,
զարգացած միտքը եւ ճաշակը զիրար կընդ-
գրկէին:

Սիսէն հասած նորագոյն լուրեր կը հա-
ղորդեն թէ, Մուշեղ Վրդ. Ատանայի մէջ իր
առաջնորդական պաշտօնը ստանձնելէն ետքը,
Կիլիկիոյ Ս. Կաթողիկոսին անուան տօնա-
խմբութեան առթիւ Մայրավանք գացեր
է, իր յարգանքը մատուցանելու Կիլիկիոյ
հոգեւոր պետին: Ատանայէն գատ, Մէրսին
եւ Թուրսուս ալ կը գտնուին իր առաջնոր-
դական չրջանակին մէջ ուր դպրոցական
գործը մասնաւորապէս պիտի օգտուի գը-
րագէտ Արմաշականին ներկայութենէն, եկե-
ղեցական ու բարեգործական հաստատու-
թեանց հետ:

Տ. Ա.

ԱՆՈՒՅ ԽՕՍԷՍԵ...




ԿԻՆԸ

— «Կոպիտ, անշընորհ, անպիտան էրիկ,
«Ա՛լ չեմ դիմանար, հերիք է, հերիք,
«Մեր ամուսնութեան սև օրէն ի վեր
«Վայրկեան մ'իսկ հանգիստ, հաճոյք չես տըւեր,
«Ո՛ւր էր սատկէիր ու, մէջ դըժոխքին,
«Սատանին աղջիկն ըլլար քեզի կին,
«Ու չարչարուէիր յաւիտեանապէս...» :

ԱՅԲԸ

— Է՛հ, է՛հ, բայց հոն ալ, ճիշդ հոս տեղի պէս,
«Գիտցած եղիր որ, օրէնքով արդար,
«Մարդու՝ կընութեան՝ երկու քոյր չեն տար...» :

ԵՐԱՅ ԽԱՐԱՐԸ



Մարդու մը— ջոջ կալուածատէր —
Դէմն, օր մը, մէկն ելաւ խոնարհ,
Նւ «Իմացայ որ, ըսաւ, Տէ՛ր,
«Թէպէտև դուք զիս չէք ճանչնար,
«Վստահելի, պարկեշտ, արթուն,
«Հաւաքիչի մը պէտք ունիք...
«Այդ պաշտօնն ինձ տայիք...

— «Բայց դուն,

Յարեց ջոջը, ինչ արժանիք,
«Կար ու կորով ալ ունենաս,
«Նախ և առաջ ինձ, պէտք է որ
«Ապահովող զէն կամ վընաս
«Յոյց տաս մէկ լաւ երաշխաւոր.
«Երաշխաւորդ ո՞վ է...

— «Տէ՛ր իմ,

«Ա՛խ, տիպար լուրջ, աղնիւ մարդու
Դասպարը կար ինձ մըտերիմ...
Կախեցին զայն անցեալ շարթու...» :

Ֆրանս. Գլանդաբար
ԱԼՓԱՍԼԱՆ

Ք Ր Ո Ն Ի Կ

«Յառաջիկայ թիւին համար սիրուն յօդուած մը կըսպասենք քենէ»:

Ահա՛ ինչ կը խնդրէր ինձմէ Մասիսի խմբագրութիւնը՝ մեծ անկեղծութեամբ և վերջին թղթաբերով:

Սիրուն յօդուած մը... je ne demande pas mieux... բայց ընտր...

Տա՛րի մըն է, տա՛րը՝ ամիս, չեմ յիշեր, ուղեղս կըմբոստանայ որ և է բան մը յղանալու, Նաբոլէոն առաջինին առաջին կընկաւր պէս:

Եւ իրաւունք ունի... ուղեղս: Մէկ երկոտասնեակ ամիսներէ ի վեր իրեն մատակարարած սնունդս իրաւունք չի տար ինծի իրմէ պահանջելու բան մը որ տարբեր ըլլայ ուրիշներու ուղեղներուն ընծայածէն:

Ռուսեւճարոնական պատերազմը մէկ կողմէն և սա Արեւեաններուն ամուսնական խնդիրը միւսէն, մահամերձ վիճակի մը հասցուցին մեր գրականութիւնը: Թերթերու, հանդէսներու մեծ մեծ էջերը, մէկ ծայրէն միւսը, կա՛մ պատերազմի լուրերով լեցուած են և կա՛մ Նազարէթ Ներսէսեանի յօդուածներով qui n'en finissent plus:

Իրաց այս վիճակին առջև, ինչպէ՛ս կուզէք որ միտքս չեղում մը ընէ՞ դէպ ի դուրս և գտնէ նիւթ մը որ տարբեր ըլլայ օրուան նիւթերէն:

Երբ ստիպուած եմ լրագիր մը կամ չաթաթաթերթ մը ձեռքս առնելու, նողկանքի պէս բան մը կըգգամ ներսիդիս, քանի որ դատապարտուած եմ հազարերորդ անգամ ըլլալով կարդալու միեւնոյն բառերը՝ Թօֆիօ, Կրիլէնպէրկ, Աֆիօն-Իարահիսար, Օեամա, Չիէն-Լին-Լին, Դատաստանական խորհուրդ, Առաջնորդ, Մուքալէն և մնացած բոլոր գլուխցաւորութիւնները: Այդ պարագային, մէկ կողմ կը նկատեմ ձեռքինս, պաճեօս կ'առնեմ, կը լուացուիմ, և փափաք մը կուգայ վրաս փրցնել, հանել գլխուս մէջէն այն ամէն խորհուրդները դորս այդ սնոտի ընթերցումները կըցան թորել անոր մէջ. այդ գը-

լուիւր աղտոտած կ'երեւի ինծի և Համլէթի պէս պոռալս կուգայ to sleep...to dream!

Բարեբաղդաբար, քաղաքականութիւնը ո՛չ տկար կողմս է և ո՛չ ալ զօրաւորը: Միեւնոյն բանն է ինծի համար եթէ վաղը ճաբոնցիները քեյթ ուօֆ մը պարեն Բեդեսպուրկի մէջ և կամ Ռուսերը իրենց թէյը խմեն Միքատոյին անձնական գաւաթներով: Այս կամ այն պարագային, կեանքը սաչափ մը չի փոխուիր ինծի համար, նոյն իսկ եթէ գիտնամ թէ Ռուսերը՝ պզտիկ պզտիկ սօսպաներով Սիպերիայի կլիման տաքցնելու չափ առաջ դացած են քաղաքակրթութեան մէջ:

Ռուսերը յաղթական ելլեն և կամ ճաբոնցիները, նորէն վաղը առտու սուրճս Բօսթիին պիտի առնեմ և գիշերը երկուքէն առաջ անկողին չպիտի մտնեմ:

Դալով միւս խնդրին, որ քիչ մը աւելի փափուկ է և նուազ հանրային, նորէն կը կրկնեմ թէ տրուած publicitén չափը անցուց ալ և թէ մեր լրագրութեան մէջ չէր արժէր որ կտոր կտոր ըլլայինք գիտնալու համար թէ այսինչ Տիկինը... Խե՛ր կամ ոչ, ինչ որ գիտէք:

Կուսական ասանկ նուրբ խնդիր մը, երբեք այսքան չարաչար կերպով հրապարակ հանուած չէր:

Նոյն իսկ եթէ... չե՛ր—չառ աղջիկներու գլխուն ատանկ ձիւներ եկած են—ատիկայ պատճա՞ռ մըն է որ բան դօրծ թողունք, աշխարհք մոռնանք, պարզապէս միմիայն փնտռելու համար աղջկան մը—այս բառը ամենայն վերապահութեամբ կը գործածեմ—այո՛, աղջկան մը état civil:

Հակառակ այդքան մեղան թափուելուն, հակառակ այդքան դատերու, եթէ կարելի ըլլար սապէս փիլիսոփայել թէ՛ հանրատուներու մէջ տարիներով բզկտուած կիներու քով երբեմն աւելի բարոյական կայ, սրտի աւելի մաքրութիւն, քան այն կոյսերուն քով որոնք իրենց նարնջենիի ծաղիկով կը պարծենան, մինչդեռ այդ նարնջենիի ծառին բոլոր մնացած տերեւները հտտիկ հատիկ փրցուած են արդէն, առանց ծաղիկին դպցուե-

լու։ Եթէ մտածելու ազատ այս եղանակը
ընդունուէր, միանգամ ընդ միշտ վերջ
պիտի գտնէր այն դժուարին վիճակը որուն
ենթարկուած են ստէպ այն խեղճ մեղքնա-
լիք արարածները որոնք մոլորումի վայր-
կեանի մը մէջ և ընդհանրապէս առանց ու-
ղելու վրայ տուած են մարմնի կուսութիւնը,
բայց անվթար մաքուր պահած են՝ ինչ որ
ամէնէն շատ փնտռելու է այր մը իր կնոջմէն,
սրտի կուսութիւնը, հոգիի մաքութիւնը։

Հոգեբանական այս խիստ նրբին խնդիրը
պարզել ապահովապէս գործը չէ իմինիս պէս
ամբարիշտ գրչի մը, հետեւաբար զանց կ'առ-
նեմ ինչ որ կրնայի ըսել այս scandaleux խնդ-
րին վրայ և կը յիշեմ թէ սիրուն յօդուած
մը կըսպասուի ինծիմէ, այսօր զրկուելու պայ-
մանաւ։

Մազերը միշտ սև պահելու արհեստը,
հաւկիթները թարմ պահելու եղանակը, ե-
րեսնուն փոթերը անհետացնելու ճամբան,
քաղաքավար երեսնալու ձեւը, սէրը կեղծե-
լու հնարը, այս ամէնը կան ու կը մնան։
Սիրուն յօդուած մը գրելու միջոցը գիտէ՞ք,
ատ ըսէք ինծի։

Կարգուիմ նէ, նիհար աղջիկ մը պիտի
առնեմ ըսողը ռնգեղջուրի պէս ամբարտա-
ւան կերպով գէր արարածի մը վրայ ինկած
է միշտ։ Կրթեալ, ուսեալ, զարգացած զգա-
յուն կին մը փնտռողին դիմացը՝ ողորմասէրն
Աստուած, հեօթելի պէս անբան և՛ կրանիթի
պէս անզգայ աղջիկ մը հանած է։ անոնք որ
հպարտացած են թէ վերջապէս գաղափարա-
կից կին մը գտած են իրենց, երկու ամիսէն
կը տեսնես որ գաղափարը վերցեր է մէջ-
տեղէն և կիցը կը մնայ, չեմ գիտեր ուր
տեղը տրուելիք։

Ասոր պէս, ամէն անգամ որ սիրուն յօդ-
ուած մը գրելու համար նեղած եմ ես զիս,
միշտ հակառակ արդեւնքին հասած եմ, օ-
րէնքներու ամէնէն բնականին հետեւանքով։

Բարեբաղդաբար Բարեկենդանի(*) մէջ կը
գտնուինք և այս mascaradeի միջոցին դուք

(*) Ի՞նչ. Խ. — Այս Բրոնիկը, Բարեկենդանի
շաբթուն գրուած, վերջին ժամուն ստանալու-
նուս՝ այս թիւով միայն կրցանք հրատարակել։

բարակը փնտռելու իրաւունքը չունիք և
ինծի ալ մեղք է որ ինքզինքս նեղեմ, չէ։
Յնծութեան, խրախճանքի, ծպտումի այս
օրերուն մէջ, եկէք խնդանք և հաւատացէք
որ կեանքը կուտ մը չպիտի արժէր եթէ խըն-
դալը տրուած չըլլար մարդուն։ Քանի որ
ասանկ է, պարագայէն օգտուինք, և քիչ մըն
ալ ընթերցողունիներու հետ խօսուընտրմ։

Անշուշտ Տիկին, և դուք Օրիորդ, յօդ-
ուածիս այս կէտին հասնելուդ պէս, ինք-
նաբերաբար և դուք ձեզի հարցոցիք թէ
իզմիրի վերջին պարահանդէսին ամէնէն գե-
ղանի կինը ո՞վ էր արդեօք։

Այս կնոջական ունակութիւնը ամէն տեղ,
և ամէն ժամանակ միեւնոյնը մնացած է։

Կնկան մը առջին երբ պարահանդէսի մը
խօսքը կ'ընես, անպատճառ կը հարցնէ։

— Ամենէն աղուորը ո՞վ էր։

Իսկ երբ այսինչին համար մեռաւ կըսես,
անխուսափելիօրէն կուզէ գիտնալ թէ։

— Ինչէ՞ն մեռած էր։

Ասանկ ապուշ հարցում... Մարդը մե-
ռեր է, իբր թէ այդ ըսական չըլլար, պէտք
է՝ որ չի մոռնար ձեզի իմաց տալու թէ ին-
չէ՞ն ճոկեր է, օ՛հ։

Այս macabre խնդիրը մէկ կողմ, գանք
միւսին։

Եթէ ինծի հարցնէիք, օրինակի համար.

— Ձեր ամենէն աւելի հաւնածը ո՞րն էր.

Անշուշտ պիտի պատասխանէի.

— Դրեթէ ամե՞նքն ալ։

— Կը ներէք, կրնաք աւելցնել, մեր հար-
ցումը այդ չէր. կուզէինք գիտնալ թէ ձեր
աչքը ամենէն շատ ո՞վ խածաւ։

— Չձեզ, տիկին։

— Բայց փնտռածս, պարոն, madrigal մը
չէ, այլ դատաստան մը, Բսէք հիմայ, եթէ
այդ գիշեր գեղեցկութեան մրցում մը ըլլար,
prixն որո՞ւ պիտի տայիք։

— Անպատճառ կ'ուզէ՞ք գիտնալ, լաւ,
այդ պարագային մրցանակը Տիկին Բ...ն պի-
տի վաստկէր։

— Բայց պարոն Բ. կ'ըսէր թէ ամենէն
գեղանին Տին Ս...ն է եղեր։

— Հակառակը չեմ պնդեր, իրեն համար
Տիկին Ս, աղուոր է, ինծի համար՝ Տիկին Բ.

— Բայց այդ երկու կիններուն մէջ հակա-
սութիւն կայ. Տիկին Ք. նիհար և խարո-
հալ է, իսկ Տիկին Ս. գէր և թխորակ. ա-
տոր մէջէն ինչպէ՞ս ելլելու է :

— Երկուքին մէջ մնալը աւելի խելացու-
թիւն է, տիկին, և յետոյ երբեք չի գիտ-
ցուիր թէ որո՞նք են ճշմարտապէս գեղեցիկ
կիները :

Այս միջոցին միտքս կուտայ ամերիկեան
ամէնէն «Successful» մէկ Հանդէսին ըսածը,
որ վեր վար հետեւեալն է .

«Կարելի չէ գտնել երկու մարդ որ՝ հա-
մակարծիք ըլլան՝ եթէ հարցուի իրենց թէ
գեղեցիկ կինը ինչպէ՞ս ըլլալու է : Կնոջական
գեղեցկութեան վրայ բացարձակ իտէալ մը
կաղմել կարելի չէ : Այդ խնդիրը անլուծելի
պիտի մնայ միշտ :

«Գեղեցկութեան գաղափարը ընդհանուր
չէ. ամէն ոք իր ուղած կերպով կը հասկնայ
գեղեցկութիւնը և իր հասկցած կերպով կը
բացատրէ զայն : Օրէնք մը չի կրնար չին-
ուիլ այս մասին : Անհատական նախապատու-
թիւններ կան, ուրիշ ոչինչ :

«Բայց ինչ որ ընդհանրապէս հաճելի կըլ-
լան էրիկ մարդոց, այն սիրուն դէմքերն են
որ ոչինչ ունին քրմական և կամ ողիմպական
և որ դիմացինին մարդկային զգացումներ կը
ներշնչեն միայն : Շարժուն, ժպտուն, յեղյե-
ղուն դէմքերն են որ գրեթէ միշտ կը հրա-
պուրեն այն դէմքերը՝ որ արտայայտիչ են և
համակրելի » :

Անպատճառ ամէն գիծերնուն մէջ կար-
կինի ճշդութիւնը պահող դէմքերով կիները
չեն, ըստ իս, որ ամենէն շատ հաճելիները
կ'ըլլան :

Ամերիկեան փիլիսոփային այդ վճիռը
ճշմարտութիւն մը չի պարունակէր ինքնին :

Գեղեցկութիւնը սահման չունի : Մօնթէյ-
նէն մինչև Լա Պրիւէյէ, Ռիվարօլէ մինչև
ժուպէշ շատ ու շատ իմաստասէրներ փոր-
ձած են գիտնալու թէ ո՞ր տեսակ գեղեց-
կութիւններն են որ ամէնէն շատ սէր կրնան
աղդել մարդուս :

Սիրոյ մէջ գեղեցկութիւնը դեր չունի :
Միայն գիծերու հրապոյրը, դէմքերու chif-

fonné չգիտեմ ինչը, որոնցմով չինուած է
beauté du diable ըսուած գեղեցկութիւնը,
ասոնք միայն գրեթէ կրնան էրիկ մարդոց
ծնցնել սէր ըսուած այդ անողորմ հիւանդու-
թիւնը :

Չի մոռնաք սակայն թէ, նոյն իսկ այդ
տեսակ աղուոր կին մը միեւնոյն չափով չի
կրնար աղդել այս կամ այն մարդուն վրայ :
Խառնուածքի խնդիր կայ ասոր մէջ ալ և
պէտք է գիտնալ թէ էրիկ մարդիկ սիրոյ
վրայ տարբեր տարբեր և զատ զատ գաղա-
փարներ ունին :

Ինչո՞ւ կիները կը հրապուրեն զմեզ : Ա.
սիկայ ոչ անոնք գիտեն և ոչ մենք :

Ինչո՞ւ համար անցեալ գիշեր Տիկին Ք.
ամէնէն գեղեցիկը երեւցաւ աչքիս :

Եթէ ամէն բան ըսել հարկ ըլլար...

Էն խելացի խօսքը սա մարդուն ըսածն է :
«Ամէնէն գեղեցիկ երես ունեցող կիները
անոնք են որ ամէնէն շատ երես կուտան
մեզի» :

Ճիշդ այդ մարդուն պէս կը մտածեմ
ես ալ :

ԳՐԻԶՍԵՆԹԻՄ

ԻՆՉՊԵՍ Կ ԱՃԹԱՏԻՆ ԵՒՐՈՊՈՅԻ ԳՐԱԳԵՏՆԵՐԸ

(Բ. ԵՒ ՎԵՐՋԻՆ ՄՅՍ)

ԺԻՒՂԻՆԻ ԼԵՐՔԵԹԵՐԸ

Ժիւլ Լըմէթըրը սիկառէթ մըն է վառած,
պաւսթո մը. ծուխի քանի մը ամպեր կ'ար-
ձակէ. քիչ մը կը յրջագայի, ու սեղանին
առջև կ'անցնի :

— Օ՛հ, ես, ես ժամավաճառութեամբ
կ'աշխատիմ : Գրասեղանիս առջև կ'անցնիմ,
կը ծխեմ ծխամորճս, քանի մը տող կը գրեմ,
քիչ մը կը պտտիմ, կը բանամ գիրք մը, կը
թղթատեմ, դարձեալ գրասեղանիս առջև
կ'անցնիմ, ու յետոյ դարձեալ ի՛նչու, Միշտ
կը պտտիմ :

Իրեն իբր աշխատանոց ծառայող սենեակը
գիրքերու քաղաք մըն է, լուսաւորուած

գունաւոր ապակիներու լուսանցքով մը, հրաշալի քաղաք մը, ուր սքանչելի կազմով գիրքերու դէպ մը կը բարձրանայ, հին ու նոր դասականներու հրատարակութիւններէն: Դրատունին խորը, Մոլիէռի ու Ռենանի երկու կիսարձաններ՝ կը հովուեն այս սրբարանը. և ճաշարանը հանող պղտիկ սանդուղին գլուխը ագուցուած ու վահանի մը գլուխը հանգչող քաղաք մը՝ կը ներկայացնէ թաւաւսքող մետաքսազգեստ ծառանցի մը, մէջքը խոթած երկու դաշոյն, և այս ծառանցին ուրիշ մէկը չէ՝ բայց եթէ նոյնինքն ժիւլ Լըմէթը:

Հիմա կրթնած է սեղանին, որուն վրայ կարգով շարուած են թուղթեր: Իր բաճկոնէն՝ որուն նեղ վիզը կը գոցուի փողկապին վրայ, կը կախուի միականի ակնոցը: Զեռքերը գրպանին մէջն են, գլուխը քիչ մը հակած, ու մեղմօրէն կը ժպտի:

— Այո՛, այո՛, ինծի շատ հաճոյք կը սպասուէ թատերական կտոր մը գրել, ատիկա շատ կը դրօսցնէ զիս ստուգապէս: Երբ քաղաքական կամ քննադատական յօդուած մը կը գրեմ, ո՛հ, ինդիրը կը փոխուի: Տաղտուկ կը պատճառէ ադ ինծի: Երեւակայեցէք որ պէտք է վստահ ըլլամ թէ, արդեօք սխալ գաղափար մը չե՞մ յայտնել:

Ու կը նստի կաղնեւիայտէ ոսկեղբորուագ ու կարմիր թաւապատ խոշոր թիկնաթոռին մէջ:

— Ասկէ դատ, — կ'ըսէ, — բան մը միայն կայ որ սրտմաշուք կը պատճառէ ինծի, գիրքերը, ու ինքնատիպ գիրք մը գտնելու համար միայն աճապարելու ճանճրոյթը կ'ունենամ:

ԲՕԼ, ԷՌՎԻԷՕ

Լուսաւէտ ու գաղջ աշխատանոց մըն է Բօլ Էռվիէօի սենեակը: Ամբողջ պատերուն երկայնքին, մատենադարանը կ'երկարէ իր մահոգենիէ տախտակները, ուր լեցուած են բաղմագունակ կազմերով, տեսակ տեսակ գիրքեր, հինը, դասականը, նորը, ու նշատարաններուն, թիկնաթոռներուն, աթոռներուն ու բազմոցներուն վրայ՝ դեղին, կա նանչ, կապոյտ, կարմիր ուրիշ գիրքեր շիջ-

ուած են, կամ խախուտ դէզերով իրարու վրայ կը բարձրանան, խառնուած պոռթիւսներու, հանդէսներու, թերթիկներու: Տեղ տեղ, ուր գորգերն ալ իրենց տեղը գրաւած են, կախուած են լուսանկարներ, ուրուսագիրներ ու նկարներ:

Անգլիական կերպասէ բաճկոնն ի վար կախուած միականի ակնոցը, աչքերը անուշ ու միանգամայն սրահայեաց, ճակատը բարձր հարթ մագերու տակ՝ զոր քովընտի ճեղք մը մէկ կողմ կը բաժնէ, բերանը նեղ ու նուրբ, և կղակը ցցուն, Բօլ Էռվիէօ, շըրթունքներուն վրայ սիկառէթ մը, կ'աշխատի: Ժամը կէսօրուան մէկն է: Ութը ժամէ ի վեր արթնցած, կարդացած է թերթեր, ընդունած՝ հիւրեր. հիմա, հպատակելով կանոնի մը՝ զոր շատ կը յարգէ, կըսկսի այն աշխատութիւնը՝ զոր պիտի շարունակէ մինչեւ ժամը վեցին քառորդ մնացած՝ երբ սպասուորը կը բերէ Թաճը: Շաբթուան հինգ օրերը ասանկ հաւատարմաբար աշխատութեան նուիրած է ան. վեցերորդ օրը՝ Ակադեմիի օրն է. և եօթերորդ օրը՝ հանգիստի: Եօթը տարիէ ի վեր է որ Պալայի պողոտան կը բնակի. և գոնէ երկու անգամ պտոյտ ըրած չէ Անտառին մէջ:

Կամաւոր աշխատող, — որովհետեւ ինքզինքը կ'արգելափակէ, — ուրիշ հաճոյք չունի՝ բայց եթէ անգամ մը աշխատութիւնը կատարելապէս ամբողջացուցած տեսնել. ինքզինքը աղատած կը զգայ ատով:

Երբ վէպեր կը գրէր, օրական վեց էջ կ'արտադրէր, 20×15 սանդիմէթրնոց էջեր, սեղմ գիրերով լեցուած: Օրական հինգ ժամ աշխատելու այս կանոնով՝ չորս շաբաթէն գրած է Ունեիքն, և երեք ամիսէն՝ Մարգուրիտէն, մէկ շունչով, առանց ուրիշ ուղեցոյցի, բաց ի էջի մը վրայ մրոտած կարճ ցուցանիշերէ:

Բօլ Էռվիէօ կ'արտասանէ իր տրամախօսութիւնը: Կը պտտի ծխելով, մինչև մօտակայ սենեակը, և զրելիք նախադասութիւնը գտնելու համար, կը փնտռէ զայն արտասանելով, կամ մանաւանդ լսելով, ցած ու քիչ մը խռպոտ ձայնով մը: Զեռքերը կը

սեղմէ՝ կռուիլը գոցած, մինչ բազուկները կռուելու շարժումի մը մէջ կը մնան։ Խօսքը գտածին պէս, կը գրէ անմիջապէս։ Երբեմն լալու աստիճան կը յուզուի, և տեսարան մը կարգալով՝ ինքն իսկ կը յուզուի աւելի քան ունկնդիր մը, բայց աւելի ցասումէ է որ կը գրաւուի, քան գորովէ։ Մասնաւոր ճիգ կը թափէ դերին մէջ գտնուելու, և շարունակաբար դիրքը փոխելու, երբեմն աջ կողմի դերը ստանձնելով, երբեմն ձախ կողմինը։ Տրուած ըլլալով նիւթը և տեսարանին ստացած երեւոյթները, կը մտածէ թէ ինչ պիտի ըսէ այն պարագային, եթէ Բիէռ կամ Ժան է, և կամ Բիէռէթ կամ Ժանն։ Տեսնենք, կ'ըսէ, ինչ պէտք է պատասխանեմ։ Ներշնչման չէ որ կարեւորութիւն կուտայ, այլ կանխորոշութեան և անընդմիջական խոկման։

Երբ հսկէ փորձի մը, կը բացատրէ պրուեստագէտին ինչ որ ուզած է արտայայտել, երբ սխալմունք մը կը տեսնէ։ Բայց երբեք ոտք չի կոխեր բեմ, երբեք ձայնը ճշդելու թելադրութիւն մը չընէր, խաղարկուներէ չատերու այդ մտահոգութեամբը ղրաղելով։

Գալով իր ձեռագիրին, ան կը բաղկանայ միեւնոյն չափը ունեցող թերթերէ, որոնք առանձին ծրարներու կը բաժնուին, իւրաքանչիւր արարուածը անջատաբար։ Իր դիրք մանարտիկ է, սեղմ, ու մէկ ծայրէն միւսը չեղակի։ Աւրուած չափ կան իր ձեռագիրն մէջ, չկայ էջ մը՝ ուր աւրուած չգտնուի։ Ուղանաղան մասերու մէջ ձեռագիրն ամբողջութիւնը արուած է, հորիզոնական գիծերով, կամ սեղմ ակունքներով զիկզակէ սակայն թուղթին յանձնուելէ առաջ, բոլոր նախադասութիւնները որոճացուած են։

Ատենով, Էռվիէ, կ'երեւակայէր ու կը զրէր խիստ արագ, յաճախ նշան մը ընելով թուղթին վրայ՝ բացատրելու համար ըսել ուղածը, յետոյ այդ իմաստաճոխ նախատիպին վրայ կ'աշխատէր, զարդանկարիչի մը խնամքով։ Հիմա, չափ աւելի պզտիկ քայլերով, առաջ կ'երթայ, վճռական ձև մը փնտռելով, և հետագայից կարգութիւնը։ Որովհետեւ ճապաղ կը գտնէ ինքզինքը, ճապաղութիւնը իր բնական թշնամին է, և համոզուած է որ

գրած ատեն ճապաղութեան հիմը կը դնէ, հետեւաբար սրբագրութեամբ, աւրելով է որ կը տիրանայ պարզութեան։

Վերջին մտատանջութիւն մըն ալ է իր տխրատութեան մէջ, երկու երեք շաբաթ գործածութեան մէջ դնել անուններ՝ վերջնական վճիռը տալու համար այն անուններու մասին, զորս իր տեսութեամբ լիովին յարմար կը դատէ իր հերոսներուն նկարագրին։ Երբ «Կուրժիրան» կը կոչէ կոչոյ մարդիկը, անո՛ր համար է որ կոչոյ կը գտնէ այդ բառը և ճշդիւ համապատասխան՝ անոնց խառնուածքին։ Իսկ մականունները՝ կը փնտռէ Ալմանա Կօթաէն, սա կանխահոգութեամբ որ, պարզ ըլլան անոնք, յաջորդելու համար արուեստագիտական անունի մը, և ազնուական՝ որպէս զի ռամիկ անունի մը հակադրէն։

ՌԻՐԻՇ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՅ ՅՐԱՆՍՍԵՐ
ԳԺԱԳԻՆՏԵՐ ՌԻ ԳՐԱԳԻՏՈՒՀԻՆԵՐ

Տիկին Մառթէլի — Ժիր — աշխատանոցը հռչակաւոր է։

Նիուլիի մէջ, Պինօ և Շէզի փողոցներուն անկիւնը կազմող տան առաջին յարկաբաժինը, իր թէ՛ ննջասենեակին է և թէ՛ դարձախօսը։ Հոն անկողինը մօտն է պէնճուալին ու գրասեղանին, և էստաններու չիչերուն քով են թուղթի կտրիչները, մեղանի շիշերը, կնքամօմի գաւազանիկները, կահ-կարասիները բոլորն ալ ճերմակ են։ Պատերէն կը կախուին մատիտով գծուած նկարներ, Տիկին տը Մարթէլի, իր աղջկան պատկերները և Ժ. Գարուն կերպասով չրջանակներ՝ կը պարունակեն լուսանկարներ։ Բայց յանկարծ, գիտողին ակնարկը, զարմացկոտ ու տխրութեամբ, կանգ կ'առնէ սիրուն զարդի մը վրայ։ Նըմինէին հայելին վրայ խոշոր պահարան մը կայ՝ սա՛ պարզ բառերով «Իմ կտակ»։ Հոտ է որ, Տիկին տը Մարթէլ կը գրէ իր վէպերը, պատուհանները բաց, ամառ ձմեռ, և միայն իր ետեւ վառող փայտի կրակարան մըն է որ, կը մեղմացնէ ոգին ցրտութիւնը։

Առտուան ժամը հինգին, գրասեղանին առջևն է, հոգ չէ՛ թէ կէս գիշերուն պառ-

կած ըլլայ։ Ու հոտ կը կը մնայ մինչև ցորեկուան ճաշը, ու երբեմն ալ ցորեկէն ետքը։ Ոգեւոր, սրարագ է իր գիրը, թերթերը խոշոր կանաչագոյն։ Երբեք չաւրեր, ո՛չ իսկ տրամախօսութիւններուն մէջ։

Իր շունը, Բաբիյօն, կը քնանայ իր ոտքերուն տակ։ Իրմէ չբաժնու իր ան։ Ամառն է միայն որ, փորձ սրբագրելու համար, պատըշգամին մէջ աթոռի մը վրայ կը նստի, ու կ'աշխատի ծունկերուն վրայ։ Տիկին աը Մառթէլէ աւելի կանոնաւոր աշխատող գրագէտ չկայ։

Պէտք չէ կարծել որ, բոլոր գրագէտները աշխատելու յատկանշական եղանակ մը ունին։ Քաթիւլ Մէնտէս կ'աշխատի ո՛ւր որ ուզէ։ Իր աշխատանոցին պզտիկ սեղաններուն վրայ, սրճարանը, երկու արարուածներու միջև, կամ Սէն-Ժէռմէնի անտառին մէջ, չըջագայելով։

Բօլ Պուռօէ չարատանջ աշխատող մը ու պրպտող մըն է, և երբ գիրք մը գրելով զբաղած չէ, առիթ չի կորսնցնէր բանի մը տեղեկանալու։ Ժիւլ Բլարթիի իմացականութիւնը միշտ առկայ՝ է ու երեւակայութիւնը միշտ արթնութեան մէջ։ Տիկին աը Նօայլ կը սպասէ որ ներշնչուած իրեն թելադրէ գեղեցիկ բաներ։ Բօլ Ատան, Ռօնի, Տօնէյ, Գաբիւս, Վանտըրէմ, որոնք հրաշալի արտադրութեան մը գիւրութիւնը ու կանոնաւորութիւնը ունին՝ զրասեղանին գլուխը կ'անցնին... Ինչպէս փափկակեր մարդուկներ պատրաստ սեղանին գլուխը։ Ասոնցմէ երկու առաջիններուն՝ ճաշակաւոր կիներու հաճելի ու սիրուն աշխատակցութիւնը՝ առիթը կ'ընծայէ անգամ մը զրուած տողերը լաւագոյն կերպով գնահատելու, և Վիլլի, որ իր սրամիտ ներշնչումներուն ultra modern style աշխատանոցի մը գրուագը կը հագցնէ, որոշափ բան պիտի ըսէր սիրով, այս մասին...

Մառկոթ եղբայրներն ալ, կանոնաւոր ու տեւական աշխատողներ են։ Այս երկու եղբայրները միասին կ'աշխատին, ու մարդ չկրնար ճշգիւ որոշել թէ, ի՞նչ է իւրաքանչիւրին բաժինը գործին մէջ։ Իրենցմէ ո՛չ

այնչափ հեռու, կը տեսնուի զօրավար Մառկոթի սուրը, իրենց մեծանուն հայրը։ Էտմօն Ռօսդան աւելի փրփրայոյզ է։ Կը խորհրդ հրդ՝, կ'երազէ, ու յետոյ կ'աշխատի տեսակ մը տենդի մէջ, որ իրեն պատճառ կ'ըլլայ՝ մեղանով սեւցուցած թերթերը աշխատանոցին մէջտեղուանքը նետելու։ Կը գրէ ու կը նկարէ, որովհետեւ իր գրած բանաստեղծութիւններուն համար նկարներ կը գծէ թուղթին լուսանցքին վրայ։

Ի՞նչ եզրակացնել հիացման ու գուրգուրանքի արժանի այս գրագէտներուն ներքին կեանքին վրայ նետուած քանի մը ակնարկներէն, եթէ ոչ սա՛ թէ, գրական աշխատութեան համար ընդհանուր կանոն մը չիկայ և թէ տաղանդը իր քմահաճոյքները ունի, — ամէնէն յարգելիները քմահաճոյքներուն։

ԲՕԼ ԱՔԵՐԷՆ

ՆՆՈՎՔ ԱՐՄԷՆ

ՊԱՐՏԱԿԱՆ ՈՒԹԻՒՆ

Բազմակողմբառ մը՝ պարտականութիւնը, որ երբեմն կրօնաւորի սքեմը կը հագնի, մերթ իմաստասերի աղաքողոնով կը լրջանայ, և յաճախ բարոյախօսի խանդավառութեամբ կ'ոգեւորուի։ Գաղափար մը այնքան հին՝ որքան անձեռնադիւ, և որ սակայն իր դարաւոր կեանքին մէջ ըմբռնումի տեսակէտով կրած է եղանակաւորումներ։ Սաստիկական տեսութիւններու մէջ կաշկանդուած, կամ ալլաստիկական հայեցողութիւններու մէջ ծաւալած, պարտականութիւնը տիրական զգացում մը և գաղափար մը մնացած է միշտ։ Գիտական սահմանումներ վիճած են ո՛չ երբեք անոր գոյութեան իրաւունքին վերաբերութեամբ՝ որ մարդկային հոգիին մէջ է խարսխուած, այլ անոր ընդհանուր յարաբերութիւններուն նկատմամբ միայն։ Պարտականութեան գգացումը բողբոջումն է գիտակցութեան որ չքեղ ծաղկումով մը կը փթթի ո՛րքան տեսադէտին նոյնքան նաւաբար չինականին կուրծքին տակ հաւասարա-

պէս։ Մտաւորական զարգացումը կրնայ լայն-
ցընել անոր շրջանակը և տիեզերական ամ-
բողջութիւնն ընդգրկել տալ, ասով մէկտեղ
սակայն անուսի մը համար ալ մեռեալ դաս
մը չէ՝ պարտականութիւնը՝ որ աւելի բարո-
յական գիտակցութեան մէջ կ'աճի և կ'ուռ-
ճանայ։ Ամէն մարդ, իր հոգեկան զարգա-
ցումի որոշ մէկ շրջանին՝ կը զգայ ազդու-
պարտականութեան, որ տիրապէս կը գրաւէ
ենթական և իր ներշնչումի զօրութեան աս-
տիճանով՝ իր մէջ կ'ընկուզէ ուրիշ ամէն նը-
կատում կամ զգացում։ Պարտականութիւնը
հարկադրող է և բացարձակ, և անոր զգա-
ցումին ներդրութիւնը լաւագոյն չափանիշն
է ենթակային ներքին արժէքին ու կատա-
րելութեան։ Հանրական է անոր ընտելութիւնը,
ամէն սրտի խոր կը հնչէ անոր ձայնը՝ ուժ-
գին կամ տկար, յստակ կամ տարտամ։

Պարտականութեան գիտակցութիւնը այն
ձգտումն է հոգիին՝ որ իր նախնական եր-
եւոյթին մէջ՝ ներդաշնակել կ'ուզէ իր «ես»ը
արտաքին աշխարհին հետ և յարաբերութիւն-
ներ ստեղծել իր և բնութեան միւս կենդանի
արտայայտութիւններուն միջև։ Եւ աստիճա-
նական յառաջտուութեամբ մը կը վերելակէ
բոլոր այն սանդղամատերը որոնք նիւթական
աշխարհէն կը սկսին, և արարածներու ստո-
րինէն կը բարձրանան մինչև անոնց մեծա-
դոյն ցուցականութիւնը՝ մարդը։ Այդ ձգ-
տումն է որ կը ստեղծէ ներդաշնակութիւնը
ընկերային փոխադարձ յարաբերութեան, և
կ'արդիւնաւորէ բարոյական կեանքը մարդ-
կութեան։ Երկնային մեքենականութեան հո-
գեկան պատկերը կամ ցոլացումն է անվասն-
զի ա'ն է որ ծնունդ կուտայ ձգողութեան՝
մարդկային ընկերութեան միջև, և կը
ձեւացնէ այն յօդակալը որ իրար կը զօգէ
ամէն էակ իրիւր հարադատ արդիւնք նոյն
բնութեան։ Սակայն, այդ յարաբերութիւնը
զոր Պարտականութիւնը կը սերմնաւորէ գի-
տակցութիւններուն մէջ՝ ազատ է ամէն շա-
հախորհրական նկատումէ, և իր անյեղի իս-
կութեան կը միացնէ կնիքը անշահախնդիր
ինքնատուութեան։ Այդ հանգամանքն է ար-
դէն գերազանց յատկանիշը պարտականու-

թեան, և կը կազմէ անոր նուիրականու-
թիւնը։ Պարտականութիւնը ճառագայթումն
է առողջ հոգիին որ չգոհանար եսասէր ինք-
նամոլութիւնի ամուլ այլամբժութեամբ և
արտարիկ (exclusif) արհամարհանքի մը մէջ
չանդամալուծեր հոգւոյն խոյանքներն ու
տենչանքները սրտին։ Մարդուն էութեան
աղնուագոյն հակումներուն ղեղումն ու ծա-
ւալումն է պարտականութիւնը, որ մարդը
բարի և ազնիւ կ'ընէ։ Համոզումի հիմն է
ան, և ձեւներէց գործունէութեան ոգին կը
ներշնչէ ենթակային։

Պարտականութեան զգացումը անձին ճա-
նաչումէն կը ծնի և կը պարունակէ տեսակ
մը իմաստասիրութիւն որ լաւագոյն փորձա-
քարն է ազնիւ նկարագրին։ Եւ երբ անգամ
մը գիտակցութիւնն արթննայ՝ անոր սերմին
տալու համար բեղմնաւոր միջավայր մը, ա'լ
ոչ մէկ ապացոյցի պէտք կայ հաստատելու
համար անոր անհրաժեշտութիւնը՝ կեանքի
հանդէսին մէջ։ Անոր հարկադրող հանգա-
մանքը իրեն կ'ընծայէ ի յառաջագունէ հիմք
մը, որ չկարօտիր ո'ր և է փորձառական ա-
պացուցութեան։

Պարտականութեան գաղափարին մեծա-
գոյն արդիւնքը պէտք է համարել պատաս-
խանատուութեան զգացումը։ Այդ զգացու-
մով կը շինուի և կը կազմաւորուի անձնա-
կան արժանիքի գիտակցութիւնը որ անհրա-
մալտ պայմանն է ամէն տեւական գործի։
Մարդկային գործունէութեան զսպանակը երբ
լարուի անհատական արժէքի գիտակցու-
թեամբ՝ կրնայ չքել պտուղներ արդիւնաբե-
րել ընկերական տեսակէտով և կրնայ նոյն-
պէս լաւագոյն խթանն ըլլալ ենթակային
յառաջդիմութեան։ Հոգեկան բարեշրջու-
թեան զարգացումը՝ այդ հիման վրայ միայն
կը կատարուի յաջողապէս։ Եւ այդ գիտակ-
ցութիւնը անխորդ ըլլալով յոխորտ յանձ-
նապաստանութեան որ սովորական բացատ-
րութեամբ կը թարգմանուի «հպարտութիւն»
բառով, ստուգանիշն է մտաւորական կամ
բարոյական արժէքներու գնահատութեան։
Ինչպէս որ պրիսմակ մը պէտք է լոյսի ճա-
ռագայթ մը տարբադարեւու համար զինքը

կազմաւորող բազմազան գոյներուն, այսպէս ալ անձնական արժանիքի գիտակցութիւնն անհրաժեշտ է ուրիշներու ճշմարիտ արժանիքին իր սակ ծառայելու համար։ Ասկէջ զատ, անձին ճանաչումը կենսական պէտք մըն է ընկերային յարաբերութիւններու մէջ։ Ան է որ կը թելադրէ յարգանք ու պատկառանք. և միանալով իր նախընթաց պարտականութեան զգացումին՝ կը պատճառաւորէ բարոյական գոհունակութիւն, ուրախութիւն, վիշտ, և այն բոլոր հոգեկան երեւոյթները որոնց շարայարութեամբը կը հիւսուի թեզանը մեր ներքին կեանքին, և որոնց ականատես կ'ըլլանք ամէն անգամ որ բարի կամ չար գործէ մը վերջ՝ ներանձնանանք և քննենք մեր ներքին աշխարհը։

Պարտականութեան սկզբունքն այսպէս մեծ նշանակութիւն ունի թէ՛ այն տեսակէտով որ կը պահպանէ ու կը քաջալերէ հոգեկան հաւասարակշռութիւնն ու ձեռներէցութիւնը անհատին մէջ, եւ թէ մանաւանդ անոր համար որ ընկերութեան մէջ կ'ապահովէ ներդաշնակութիւնը փոխադարձ յարաբերութեան։ Անհատական շահու սկզբունքը անոր բոլորովին հակադիր երեւոյթներ կը ներկայացնէ։ Այս վերջինին համար «ես»ն է միակ առանցքը ամէն ջանքի եւ մտածութեան. պէտք է «ես»ը հոգալ ու բուծանել նոյն իսկ աղնուագոյն զգացումներու տոյժով։ Տեսակ մ'անձնապաշտութիւն որ իր կողմը կը հակեցնէ միշտ ծանրութեան կեդրոնը։ Մէկը քնարերգութիւնն է ալլասիրութեան, միւսը բանագործութիւնը եսասիրութեան։ Մէկը զեղումն է ալլասէր յոժարութիւններու, միւսը՝ քարացումն է եսասէր միտումներու։

Պարտականութեան եւ պատասխանատուութեան գաղափարները ամէնէն հզօր ստորներն են նկարագրի կազմութեան մէջ։ Դաստիարակութեան պաշտօնը պէտք է ըլլայ տղուն մէջ արթնցնել այդ գաղափարները եւ հետզհետէ զգացումի վերածել զանոնք, վասն զի առանց զգացումի՝ գաղափարը կը նմանի ապառաժի վրայ նետուած ցորենահատին։ Այդ սկզբունքին վրայ խա-

րըստուած բարոյականը ամէնէն առողջ արդիւնքը պիտի տայ մարդկութեան։ Եւ անձնութեան գաղափարականը պիտի կրնայ հոն բարձրացնել իր շքեղ շինուածը։ Նուիրումի տեսականը ինքնին վսեմ բանաստեղծութիւն մըն է եւ կը մագնիսացնէ խանդավառ գիտակցութիւնները։ Իր կատարելութեան մէջ՝ այդ տեսականը հոմանիշ կը դառնայ կրօնքին, եւ ինչպէս կ'ըսէ Խորայէլի կրօնական պատմութեան երեւոյթներն ուսումնասիրող մեծ իմաստասէր մը «կրօնքն է կազմակերպութիւնը նուիրումին»։

ԱՐՄԱՏԵ

ԱՐՇԱԽԻՐ

ԺԱՄԱՆՑԻ ԲԱԺԻՆ

ՆՕՐԱ ՏԷՐԻ ԵՒ ԻՐ ԳՈՀԱՐԵՂԷՆՆԵՐԸ

Բարիդեան քրոնիկագիր մը՝ իր վերջին յօդուածներէն մէկուն նիւթ ընտրած էր գողերու կազմակերպուած ընկերութիւնները որոնք կը գործեն Ամերիկայի ու Անգլիոյ մէջ, ճարտար ու հնարամիտ ձեւերով, և որոնցմէ մէկուն ձեռքը ինկած էր, հինգ—վեց տարի առաջ, հոչակաւոր դերասանուհի մը՝ Նօրա Տէրի՝ որուն մեծարժէք գոհարեղէններուն համբաւը չլացուցած էր զանոնք։ Մեր «Ժամանցի լաժին»ը կը նուիրենք, այս անգամ, այդ շահեկան գրուածքէն քաղուածի մը։

Նօրա Տէրի՝ Ամերիկա կատարած իր մէկ ուղեւորութեան միջոցին, ուր շարք մը ներկայացումներ տուած էր, հրաշքով ազատած ըլլալով իր գոհարեղէնները գողերու ձեռքէն որոնք կը հետապնդէին անոր, Եւրոպա վերադարձին՝ առաջին գործը ըրաւ Վիէննայի մասնագէտ վաճառատուներէն մէկը հոն գրիւլ և իր աղամանդներուն յարեւմտան կեղծերը պատրաստել տալ։ Իրմէ ետքը, բոլոր հարուստ դերասանուհիները իր օրինակին հետեւած են։ Անոնք որ պատկառելի գումար մը արժող գոհարեղէններ ունին, անոնց կեղծերն սլ կը պահեն քովերին՝ օտար

երկիրներու մէջ իրենց տալիք ներկայացումներուն վերապահուած : Նոյն իսկ Բարիզ, Վիէննա, հասարակութիւնը կեղծ աղամանդներու վրայ է որ կը հիանայ թատերասրահէն :

1895ի ձմրան եղանակին էր որ Նօրա Տէրի, — հիմայ քաշուած բեմական կեանքէն, — Լոնտոն գնաց շարք մը ներկայացումներ տալու կէթի-թէաթրի մէջ : Իր ներկայացումները հզօրապէս հմայիչ ազդեցութիւն մը ունէին անգլիացի հասարակութեան վրայ և իր կատարած ողբերգական դերերուն համար կրած արդուզարդը և ցուցադրած գոհարեղէնները ո'չ նուազ հմայիչ էին : Այդ տարին Լոնտոնի թատերասէրները, բարձր դասակարգը մանաւանդ, Նօրա Տէրիին այն տեսակ փայլուն ու խանդավառ ընդունելութիւն մը ըրաւ, որուն նմանը ո'չ մէկ օտար դերասանուհի չէր գտած անգլիական ոստանին մէջ :

Նօրաի վրայ սքանչացող մեծահարուստ Անգլիացի մը, Լորտ Հէսթինկ, չուզելով որ հոչակաւոր դեբասանուհին օթէլ իջեւանի, անոր տրամադրութեան ներքեւ դրած էր Լոնտոնի չիլիալայքը իր ունեցած գեղեցիկ մէկ տունը, սպասաւորներով, կառքերով, ձիերով : Տունը ունէր ընդարձակ պարտէզ մը, ծաղկազարդ ու դալարադարձ, հովանուտ անկիւններով որոնք հնչտալի հանդիստ մը կ'ընծայեն՝ մեծաժխոր ոստանին մէջ բնութեան հանդարտութիւնը փնտռողին : Նօրա ընդունեց այս իշխանաւայել հիւրընկալութիւնը, մանաւանդ անոր համար որ այդ ապարանքին մէջ նուազ ենթարկուած պիտի ըլլար լրաբերներու, հետաքրքիրներու հետապնդումին քան օթէլի մը մէջ :

Բնակարանը քաւական հեռու ըլլալով թատրոնէն, լրտին կառքը ամէն իրիկուն հոն կը փոխադրէր Նօրան որ ժամ 7ին (Բ. Ն.) կը մեկնէր, թեթեւ ճաշ մը ընելով, ու ներկայացումէն ետքը կը վերադառնար, սովորաբար քանի մը հրաւիրեալներ ալ ունենալով սուրբէի :

Դերասանուհին իր կեղծ աղամանդները միայն հետը առած էր Լոնտոն ուղեւորութեանը միջոցին, մտածելով որ անխոհմտութիւն պիտի ըլլար թատրոնի մը խցիկին

վստահիլ մէկ միլիոնէ աւելի արժող աղամանդներ, զմրութեաներ ու մարգարիտներ : Հանդիսականները բեմին վրայ տեսնելով զինքը Քլէոթադրայի կամ էլիզապէթի դերին մէջ, այնպէս կը հաւտային թէ իր ճշմարիտ աղամանդներովը պճնուած էին իր շքեղ հագուստները որոնց վրայ կը հիանար Լոնտոն : Նօրա կը գործածէր մինակ քանի մը մատանիները ու մանր մուշոր ոսկեղարդերը, ազնուական դասի ընկերութեանց մէջ՝ գրտնուած պահուն : Իսկ բեմին վրայ՝ կեղծ միայն կը ցուցադրէր : Բայց, խելացի ու գործնական մտքի տէր կ'լին, իր գոհարեղէններուն վրայ նոյն քան խօսեցնել կուտար՝ ըրազրական հրատարակութեանց մէջ՝ որքան իր արուեստագիտուհիի տաղանդին վրայ : և ամէն իրիկուն, թատրոն դացած պահուն, փոքրիկ պայուսակի մը մէջ խնամով փակած, հետը կ'առնէր իր կեղծ աղամանդները՝ իբր թէ ճշմարիտ ըլլային անոնք : Վերադարձին ալ նոյնպէս : Այս զգուշութիւնները հանրային հետաքրքրութիւնը գրգռելէ զատ՝ շատ մըն ալ ըղձանքներ կ'արթնցնէին . . . գողերու դասակարգին մէջ :

Իրիկուն մը, Քլեօթադրան ներկայացնելէ ետքը կէթի-թէաթրի մէջ, իր բեմական արդուզարդերէն մերկանալով՝ դերասանուհին կը պլլուէր այն խոշոր վերարկուներէն մեկուն մէջ զորս ինք անցուցած էր նորաձեւութեան կարգը, և աճապարանքով թատրոնէն մեկնելով՝ կառքը կը մտնէր, քովը տեղաւորելով իր սենեկապանուհին՝ ձեռքը բռնած գոհարեղէններու պայուսակը : Այդ գիշերը հրաւիրեալներ պիտի ունենար ճաշի :

— Շո'ւտ, Հարրի, գոչեց կառապանին, չո'ւտ, և ամէնէն կարճ ճամբէն :

Կառքը ճամբայ կ'ելլէ և կը սուրայ արագօրէն : Նօրա Տէրի ընկողմանած էր — Քլէօթադրայի դերը ամէնէն յօգնեցողիներէն մէկը ըլլալուն, — և կառքին շարժումներէն օրօրուելով կը մրափէր, գլուխը կրթնցուցած սենեկապանուհիին ուսին : այս վերջինը զարմացած կը մնար տեսնելով որ սովորական ճամբաներէն չէր ընթանար կառքը : միջնաքաղաքէն հեռացած ըլլալու էին, վասն զի

դաշտերու մէջէն կ'անցնէին. անձկութիւն և վախ պատեցին զինքը, բայց չէր համարձակեր տիրուհին արթնցնել, զայն չահարեկեղու համար: Յանկարծ, կառքը կանգ առաւ: Երեք մարդիկ ծառաստանէ մը դուրս ելլելով, ձիերուն երասանակները բռնեցին: Չօրացնուցումէն արթնցած, զլուխը պատուհանէն դուրս կը հանէր անձկութեամբ:

— Ի՞նչ կայ, Հարրի:

Երեք ճամբաներու միացման կէտի մը վրայ կը գտնուէին և լուսինը կը լուսաւորէր, այդ վայրկեանին, անհուն հորիզոն մը գոմերու և մարգագետիններու: Այն ատեն միայն դերասանուհին նշարեց ճամբուն մէջտեղ կեցող երեք մարդիկը. անոնցմէ մէկը, երեսը դիմակով մը ծածկուած, կառքին լապտերներէն մէկը առնելով՝ դերասանուհին մօտեցաւ:

— Մի՛ վախնաք, Տիկին, ձեր անձին լիստ մը չպիտի հասցնենք: Մինակ հաճեցէք մեզի յանձնել ձեր պայուսակն ու գոհարեղէնները:

Նօրա միշտ զէնք կը կրէր իր վրայ. ուշվովէրը հանելով գրպանէն, անծանօթին վրայ ուղղած էր: Մարդը անոր դաստակէն բռնեց և դաշոյնի մը ծայրը կոկորդին դիպցնելով:

— Ընդդիմութիւն չուզեր, ըսաւ, մի՛ հարկադրէք զմեզ բռնութիւն բանեցնելու, հետեւանք զէն կ'ըլլայ. կը կրկնենք թէ ձեր անձին լիստ մը հասցնել չէ նպատակնս: Կը բաւէ որ յանձնէք գոհարեղէններու պայուսակը:

Մարդերէն մէկն ալ, կառքին միւս կողմը կեցած, բռնած էր սենեկապանուհին՝ սոսկումէն կիսանուաղ վիճակի մէջ. իսկ երրորդը, միշտ ձիերուն դէմ կը կենար:

— Բայց Հարրի՛ն ուր է, կառապանս, կը դուրսը Նօրա բնազդաբար, սպաննեցի՞ք զայն, թշուառականներ:

— Կառապանի՛դ, հեգնեց մարդը խռպոտ ձայնով մը, անհոգ եղիք, տիկին. աշիկայ այս վայրկեանիս կը խուկայ Հուայթ-Չէփըլի ախոռներէն մէկուն մէջ, ձեռքերը ոտքերը կապուած: Այնչափ խմած էր որ բանէ մը տեղեկութիւն չունի. վաղն առ-

տու ողջ առողջ ձեզի պիտի ղրկենք զայն: Այս գիշերուան համար, սա երիտասարդը յաջորդած է անոր:

Կառապանը, իր նստարանէն վար իջնելով, ինքն ալ մօտեցած էր: Բալթօյին լայն օձիքներովը երեսը ծածկած ու գլխարկը մինչև աչքերը իջեցուցած, անձանաչելի էր. բայց դերասանուհին նշարեց որ իր կառապանին հագուստը հագած էր:

Դիմակաւոր մարդը յարեց.

— Մեր վստահելի ընկերներէն մէկն է ասիկա որ զձեզ ձեր ընակարանը պիտի վերադարձնէ, հարկը մեթրի չափ հեռուն վար իջեցնելով կառքէն, կը բաւէ որ խօստանաք աղմուկ չի յարուցանել, ապա թէ ոչ, պիտի հարկադրուինք զձեզ հոս՝ ճամբուն մէջտեղը թողուլ, և գիտէք որ Լոնտոնի միջնաքաղաքէն հեռու գտնուող այս մասերը վտանգաւոր են գիշերը: Արդէն, ես ինքս ալ պիտի ընկերանամ ձեզ. երկուքնուդ մէջտեղ պըզտիկ տեղ մը կը գտնուի ինծի համար. նախ, ներեցէք որ սա ուշվովէնիդ առնեմ, անհանգիստ կ'ընէ զձեզ:

Եւ, ապահար դերասանուհին ձեռքէն հրազէնը փափկութեամբ առնելէ ետքը.

— Երկու անգամ խնդրեցի, տիկին, ըսաւ, որ հաճեք ինձ յանձնել գոհարեղէնի պայուսակնիդ:

Դաշտագետինը, ուր կը գտնուէին, ամայի էր բոլորովին. երեք ուղիները կը տարածուէին, յետոյ կը նեղնային, կ'երկարէին ձեռ-ձերմակ՝ լուսնին տակ, անծանօթ ուղի-ղութիւններով. և դերասանուհին գիտէր որ իր ազամանդները կեղծ էին:

Շնորհալի՛ ձեռով մը, և յօժարափոյթ յանձնեց պայուսակը խօսակցին որ փոխանցեց զայն իր ընկերներէն մէկուն. և ակընթարթի մէջ, ճամբան բացուեցաւ: Կառքին շուրջը կեցող չորս մարդերէն երեքը անյայտացած էին: Կառապանը իր տեղը ելած նստած էր նորէն և միւս երկուքը հեռացած էին մութին մէջ: Այնպէս արագ շարժած էին ամէնքն ալ որ, Նօրա՝ այս արկածը պատմելու ատթիւ՝ կ'ըսէր թէ անպարարական տեսարանի մը տպաւորութիւնը կրած էր:

Անձանօթ խօսակիցը, երկու կիներուն քով մնացած, քաղաքավարօրէն տեղաւորուեցաւ անոնց մէջտեղը և կառքը ճամբայ ելաւ սրնթաց, երեք քառորդ ժամ ընթանալէ ետքը, նորէն կանգ առաւ: Մարդը վար ցատքեց ու ձեռքը կարկառելով կիներուն:

— Հասաք, տիկիներ, ըսաւ. տղաներնիդ հաղիւ հարիւր մէթրի հեռաւորութիւն ունի: Այստեղէն կրնաք նշմարել պատերը, Պիտի ներէք ինծի, եթէ մինչև վանդակադուռը չեմ առաջնորդեր զձեզ. բայց խոհեմութիւնը և ղգուշութիւնը պահանջումներ ունին զորս կըմբռնէք ինծի պէս:

Գերասանուհին կը դիտէր վիլլային լուսաւոր պատուհանները որոնք ղուարթօրէն կը փայլէին մութին մէջ: Որչափ ալ որ ցընցուած էր գլխուն պատահած դէպքէն, ներքնապէս կը խնդար՝ կեղծ գոհարեղէններուն վրայ մտածելով: Գրեթէ անշարեւի կերպով ողջունեց փոխադարձաբար գողը, որ խոնարհած իր առջև:

— Վկայ էք, տիկին, կ'ըսէր պաղատագին ձայնով մը, թէ վըսս մը չի հասցուցինք ձեր անձին:

— Բայց ո՛վ զօլվէ՛րս, հարցուց արուեստագիտուհին:

— Օհ, ներեցէք, տիկին, որ ձեզմէ իբրև յիշատակ մը պահեմ զայն: Մարդ ամէն առտեմ պատիւը չունենար Տիկին Նօրա Տէրին կողոպտելու:

Չարախոթութիւն մը կը փայլէր դերասանուհին աչքերուն մէջ:

— Իմ գոհարեղէններս քիչ մը չատ ծանօթ են, ըսաւ, կանխաւ իմացնեմ ձեզի, և դիւրին չէ զանոնք վաճառելը: Եթէ դժուարութեան մը հանդիպիք, իրենց արժէքին գնովը ես կ'առնեմ զանոնք. իմ հասցէս գիտէք, կրնաք ինծի բերել:

Եւ Նօրա դէպի վիլլան ուղղուեցաւ: Մարդը վերստին կառքին մէջ ցատքած էր արդէն ու ձիերը կ'արշաւէին քառասորով: X.

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Տպարանապետ եւ գրավաճառ Կարապետ էֆ. Բէշիշեան՝ Կայս. կառավարութենէն արտօնութիւն ստացած ըլլալով թուրքերէն պատկերազարդ չաբաթաթերթ մը հրատարակելու՝ երկրագործութեան յատուկ, երէկ լոյն տեսաւ Ա. թիւը այդ թերթին. ՐէՍԻՄ-ԼԻ ԶՐԱԱԹ ԿԱԶԷԹԱՍԸ անունով, որ նպատակայարմար պարունակութիւն մը ունի, ընտիր թուղթի վրայ մաքուր փպագրութեամբ եւ դունաւոր պատկերով մը զարդարուն:

Յաջողութիւն կը մաղթենք Կարապետ էֆ. Ի այս հրատարակչական օգտակար ձեռնարկութեանը:

ԽՄԲԱԳՐԱՆԱՆ ՆՕՐԵՐ

Իջմիածնէն կը հաղորդեն թէ Ս. Հայրապետը ի մօտոյ Բեդերսպուրկ պիտի երթայ, տեղւոյն Հայերուն հովուական այցելութիւն մը տալու եւ այս առթիւ՝ եկեղեցապատկան կալուածներու ծանօթ խնդրիրն համար նոր դիմում մը ընելու ուստի կառավարութեան մօտ:

Վանքէն չորս երկասիրութիւններ ղրկուած են Յովսէփ-Իզմիրեանց զբական Յանձնաժողովին, այս տարուան մրցանակաշախութեան առթիւ: Ասոնց հեղինակներն են՝ Պ. Պ. Խաչիկ Լեւոնեան, Տիգրան Զիթեան, Յովհ. Բարաղամեան եւ Միսաք Տ. Սարգիսեան: Ասոնք կը պարունակեն, մեծ մասով, Վանայ գաւառաբարբառին վերաբերեալ բառեր, ասացուածներ, ոճեր՝ իրենց լեզուաբանական ծագումով: Նոյնպէս, Սիմոն էֆ. Գափամաճեան, իր տպագրել սկսած բառարանին ձեռագիրը ներկայացուցեր է Յանձնաժողովին քննութեան:

Աւմաշի վանահայրական փոխանորդ Տ. Թորգոմ վարդապետ մայրաքաղաքս եկած է, Դպրեվանքին վերաբերեալ գործերու համար:

ՅԱԶՈՐԴ Թիւերով՝ գրական յօդուած մը
ՏԻԿԻՆ ԶԱՊԷԼ ԵՍՍԵՅԱՆԷ և ՍԻԼԻԻ ԲԵԼԻ-
տովի մէկ քերթուածին թարգմանութիւնը
զոր կատարած է մեր գրաբարագէտ աշխա-
տակիցը ՏԻԳՐԱՆ ԷՖ. ԵԼԻՖԷՆՃԵԱՆ:

Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ի Ք

Խմբագրութիւնս պարտականութիւն կը
համարի իր խորին շնորհակալիքը յայտնել
Արեւելի, Բիւզանդիոն, Մանգումէի ԷՖԵՍԱՐ
և Սուրհանդակ օրաթերթերուն ինչպէս նաև
Բիւզանդի և Սեմուալի Եփեսոսի յարգելի
Խմբագրութեանց որոնք՝ պաշտօնակցի ան-
կեղծ խնդակցութեամբ՝ համակրական տո-
ղերով ողջունեցին Մասիսին վերերեւումը:

Այս առթիւ, հրապարակային շնորհակա-
լութեան պարտք մը ունինք նաև այն բոլոր
գրասէր բարեկամներուն որոնք նամակով կամ
անձամբ խնդակցութիւն յայտնեցին Մասիսի
շարունակութեանը համար, իր սովորական
ձեւով ու կազմակերպութեամբ:

Ն Ո Ւ Ա Գ Ա Հ Ա Ն Գ Է Ս

Ազգ. Հիւանդանոցին ի նպաստ տարեկան
մեծ Նուազահանդէսը տեղի պիտի ունենայ
Մարտ 26ի կիրակի օրը, Բերա՝ Թաղապետա-
կան Թատրոնին մէջ: Կարգադիր Մասնա-
խումբը կազմուած է Վսեմ. Գաբրիէլ Էֆ.
Նորատունկեանի նախագահութեամբ: Գան-
ձապետութիւնը ստանձնած է Մարգէն Էֆ.
Յակոբեան և քարտուղարութիւնը՝ Կարապետ
Էֆ. Խօրասանճեան: Մեր համայնքին ամէն
առթիւ դէպի Ս. Փրկչեան մարդասիրական
Հաստատութիւնը ցոյց տուած տաք վերաբե-
րումը և անոր նպաստելու յօժարակամու-
թիւնը տարակոյս չեն թողուր որ Նուազա-
հանդէսը պիտի ունենայ ակնկալուած արդիւ-
նաւորումը, ամէն տարուան նման: Գալով
արուեստագիտական մասին, Կարգադիր
Մասնախումբի անդամներուն նուրբ ճաշակէն
կը սպասուի որ այս երաժշտական ցերեկոյթը
գեղարուեստական ճշմարիտ վայելք մը հան-
դիւանայ:

ԽՈՋԵՐ ՈՒ ՆՕԹԵՐ

Ամէն տարիք իր պատկառանքը ունի.
Յերութեան պատկառանքը արժանապատու-
ութիւնն է:

Մեզմէ իւրաքանչիւրը քննադատու-
թեան համար կը տեսնէ ձեռք մը, կը լսէ
ձայն մը՝ զինքը ուղիղ ճամբան առաջնոր-
դող: Ան որ ճանչցաւ այս ձայնը, հետեւեցաւ
այս ձեռքին, պարտաւոր է ընդունած ծառա-
յութիւնը ուրիշներուն մատուցանել իր կար-
գին:

Բարեկրթութիւնը ձեզ տաղտկացնող
բանը ընելու արուեստն է, այնպէս իբր թէ
ձեզի հաճելի ըլլար:

Մի միայն մասնագիտութիւնն է որ
գերազանցութեան կը տանի:

Ընդհանուր զարգացումը բոլոր մաս-
նաւորներու զարգացման արդիւնքն է:

Գերեզմանը կը փակէ երկինք մը՝ ու-
րիշ մը բանալու համար:

Յաճախ գերեզմանափորը առանց
գիտնալու, միեւնոյն դագաղին մէջ երկու
սրտեր միասին կը թաղէ:

Մահուան վրայ բնաւ չմտածելը, յի-
մարութիւն է. միշտ անոր վրայ մտածելն
ալ յիմարութիւն է:

Այնպէս աշխատէ որ բնաւ չպիտի
մեռնիս, այնպէս աղօթէ որ այս ժամուս
պիտի մեռնիս:

Թշնամանքներ կան որ կը զայրացնեն
կիները՝ առանց զանոնք դառնացնելու:

Կիները մեզմէ աւելի սուր նայուածք
ունին, եւ երբ նայուածքնիս զուգադիպի
անոնց հետ, առաջին զգածուողը միշտ էրիկ
մարզն է:

Մտքի տէր կիները կը ճառագայթեն,
բայց սրտի տէր կիները կը վերաբծարծեն:

Մայրութիւնը կնոջ մը պատուոյն լա-
ւագոյն պահապանն է:

Կին մը կ'ամուսնանայ աշխարհ մտնե-
լու համար. մարդ մը՝ անկից դուրս ելլելու
համար:

Հիմնադիր—Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ
Տէր Եւ ՏՅՈՐԷՆ—ՏՈՔՓ. ԵՊՈՒԱՐԴ ՄԱՍԻՍ
Տպագրութիւն ԱՐԵՎԵԼԻՔ Օրագրի

LA CONFIANCE



ԼԱ ՔՕՆՖԻԱՆՍ

ԿԵՆԱՅ ԱՊԱՀՈՎԳ. ԸՆԿ.

ՀՐԴԵՀԻ ԴԷՍ

ՀԻՄՆԵԱՆ Ի ԲԱՐԻՁ 1875ԻՆ

Կը գործէ ուղղակի ճրանգ. կառա-
վարութեան հսկողութեան ներքեւ

Ընթացիկ ապահովք 339 ՄԻԼԻՈՆ Ֆր.

Դրամագլուխ եւ պահեստ 38 ՄԻԼԻՈՆ Ֆր.

Ընդ. գործակալ Պոլսոյ եւ գաւառաց

ԱՐԱՄ Ս. ԳԱԼՅԱՆԵԱՆ

Պոլիս, Էմին-Էօնի, Լաբիճի խան Նո 11

Գաւառները պատուաւ գործակալներ Կր

Կոնստանդնուպոլիս 1-50



ՅՈՎԱՍԷՓ ՊԱԼՊԱԼԵԱՆ (ՄԵԼՐՈՒՆԻ)

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Մուգաֆէրիէ Հիւանդանոցին եւ

Պարսկական Դեսպանատան

Բերա, Մեծ Փողոց, Թազսիմ, քիւ 61

Զորահետան արաւոքման

Պալպալեան ամէն օր ակոյսի ամէն տե-
ռակ հիւանդութիւններով տառապողներ,
կ'ընդունի. իսկ Ուրբաթ, Կիրակի եւ Շրեք-
չաթի մինչեւ ժամը 5: Գիշերուան օր եւ է
ժամուն կարելի է զինել: Պալպալեան կ'ե-
րաշխաւորէ իր լեցուցած ու շինած ակոյս
ները: Յորեկները ակոյս քաշել տալու հա-
մար որոշ վարձք մը չկայ. քաշել տալովին
եւ մօտէն կարեալ է: Վկայեալ տառապողներ
ժուհի Տիկին Բօլին եւս կը գտնուի միշտ Նոյն
Դարձանատան մէջ: Աղփայեցեալն ձեր 2-10

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ

Գ. ԳԱՐՐԻԷԼԵԱՆ

ԲԵՐՍ, ՄԵՍՓՈԼԻՑ ԹԻԻ 200

Կալաթա-Սէրայի Լիսէին դ'մ
Գե. Նե. Նը. օրերը առաւօտեան կանու-
խեմ մինչեւ իրիկուան ժ. 11 1/2
Բե. Գե. Ուր. օրերը ճեմ մինչեւ 11 1/2
Նիքոկի օրերը ժամագրութեամբ 2-10

PHOENIX ASSURANCE L Co.

“ՖԻՆԻՔՍ”



ՀԻՄՆԵԱՆ Ի ԼՈՒՏՈՆ 1782 ԻՆ

ԿԸ ԳՈՐԾԻ Ի ՊՈԼԻՍ 1869ԻՆ Ի ՎԵՐ

ԱՆԳԼ. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ.

Դրամագլուխ եւ պահեստի դրամ

Անգլ. ոսկի 4,218,000

Ֆինիքս ասոյ հրդեհի դէմ Ապահա-
վագրական Ընկերութիւն մըն է, ծանօթ
իր պատուաւորութեամբ եւ վստասց մէջ
իր անմիջական վճարումներով:

Ֆինիքս կ'ապահովագրէ հրդեհի եւ
կայծակի դէմ մէն տեսակ տնտարծ եւ
շարժուն ստացուածք, յօյժ նպատաւար
պայմաններով:

Ընկերութեան նշանաբանն եղած է.

ՈՒՂՂԱՄՏՈՒԹԻՒՆ եւ ԱՆՄԻՋԱԿԱՆ
ՀԱՏՈՒՅՈՒՄԸ ՎՆԱՍՈՒՑ. Յո՛րդ վճա-
րած է տոակել քան 27,000,000 տեղլ.
օսկի:

Ընդհ. գործակալ Պոլսոյ եւ գաւառ-
աց. Գ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

Վիքալիս խան, Պանֆ Օրօմանի փոյ
Ղալաթիս:

Փոխ գործակալք Ի Պօլիս

ՌՈՒՐ. ԱՔԻԿԵԱՆ ՃԻՎԱՆ ԹԷՔԷԱՆ

Էմին պէյ խան Ֆնսղեան խան

Զանի բոգերու

Ա. ԷՆՔՍԷՐՃԵԱՆ

Ի Ի Ն Ի Օ Ն

ՀՐ ԴԵՀԻ ԵՒ ԿԵՆՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿ

ՀԱՍՏԱՏԵԱԼ Ի ԲԱՐԻՉ 1828-1829

ՀՐ ԴԵՀԻ ԶԻՒՂ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ շնորհք	274,000,000	Փր.
1902ին գանձուած ապահովագրին	24,000,000	»
Դրամագլուխ երաշխաւորեալ	119,000,000	»
Ապահովագրեալ դրամագլուխ	21,500,000,000	»

ԿԵՆՑ Ա. Ց. ԶԻՒՂ

Մինչև 1902ի վերջը հատուցեալ շնորհք	129,000,000	Փր.
Ընթացիկ ապահովագրութիւնք	272,000,000	»
Դրամագլուխ եւ պահեստք	158,000,000	»
1092ին գանձուած ապահովագրին	12,000,000	»

որ ընթացիկ ապահովագրութեանց գումարին հետ կը համեմատի 60% — ինչ որ «Ինքնին»ի ապահովագրելոց կ'ընծայեն հսկայ երաշխաւորութիւն մը ՈՐՈՒՆ ՆՄԱՆԸ ԿԱՐԵԼԻ ՁԷ ԳՏՆԵԼ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ ԳՈՐԾՈՂ ՈՒՐԻՇ ՈՐ ԵՒ Է ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՔՈՎ:

Արեւելքի համար մասնաւոր սակացոյց՝ գեղչեալ գիներով: Նպաստաւոր պայմաններ անհամեմատ կերպով աւելի գերադասեց քան ուրիշ ո՛ր եւ է ընկերութեան մայմանները: Շահաբաժիններու տարուէ տարի անմիջական վճարում, որով Ինքնին ապահովագրողք Ձերժ են այն վնասներէն եւ յուսախաբութիւններէն, որոնց կենթարկուին միշտ այն անձինք, որ Եահաբաժիններու բարդման (accumulation d'es bénéfices) ՅՈՒԻ եւ ՎՆԱՍԱԿԱՐ դրութեամբ գործող ընկերութեանց կ'ապահովագրուին:

Ընկերութեան դրամասունքն է ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՑՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱՆ

Թուրքիոյ եւ Արեւելիի Տնօրէնութիւն

Պոլիս, Սուլթան Համամ, Բասաժ Քաթրքը Օղլու

Մասնաճիւղ՝ Ղալաթիա, Խնայէթ Խան:—Գործակալութիւնք Թուրքիոյ գլխաւոր քաղաքացի մէջ

2-10

ՖԵՆԻՔՍ ՕԹՐԻՇԻԵՆ

ԿԱՑՍ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐ. ԸՆԿ.

Հրդեհի եւ կեանքի (Ի ՎԻԵՆՆԱ)

ՊԱՏՈՒՍԱԿԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Ն. Ա. Բ.

ԳՈՒԹՍ ԱՌԻՏ ՏԵ ՊԱՊԻՔ

ԼԱ ԷՍԹՐԵՅԵԱ

Ապահովագր. Ընկ. քնդգեմ հրդեհի եւ ծովային սեղաններու (Ի ՄԱՏՐԻՏ)

Ապահովագրութիւնք կը կատարուին լաւագոյն պայմաններով:

Սոյն ընկերութեանց Դրամասունքն է Ի Կ. Պոլիս, Քուէթ Լիօնէ


Ընդհ. եւ լիազօր ներկայացուցիչ Թուրքիոյ

Գ. ՅԵՐԱՅԵԱՆ

Գրասենեակ, Պոլիս, Հաճօղլու խան, Թ. 52-53-54-55-56

2-10

ԶԿԱՆ ԻՒՂԻ ՊԵՏՔ ՈՒՆԵՑՈՂՆԵՐՈՒՆ ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ ՄԸ



Դ Ե Ղ Ա Ր Ա Ն

Խ Ա Չ Ի Կ Ք Է Մ Ճ Ե Ա Ն

Կ. Պոլիս, Մահմուտ փաշա Պաշի, Ապուտ Է.Ֆ.ի խանին դեմ 261

Դեղարան նկատելով որ՝ Պոլսոյ կարեւոր եւ կեդրոն մէկ տեղը գտնուելուն առթիւ, Մօրինայի ձկան իւղի մասին եղած խնդրանքները հետզհետէ շատցած են, սոյն խնդրանքին եւ ի մասնաւորի Ազնիւ յաճախորդաց գիշացում մը առիւտ եւ փոքր ինչ ծառայութիւն մը մատուցանելու համար, ուրիշ եւ այս նկատ յաւանդելու թէ՛ մասնաւոր լուծման բարեւեմն մը համաձայն բերել տուած ըլլալով Բէթիւր-ՄՕԼԼԷՐԻ Մօրինայի ձկան իւղին առջին տեսակը, ԱՌԱՆՑ ՀՈՏԻ, կը ծախուի Դեղարան՝ թէ մասնաւոր յիշերու մէջ եւ թէ քաջով, մէկէն փափկակազմ օտոմարքի հա՛տը իսկ խիտ ախտի միջի ըլլալով, թէ մեծերու եւ թէ՛ տղարկակազմ պզտիկ աղայոց, Ուստի ամէն ունեւ՝ որոնք կը փափաքին խմել թէ աժան եւ թէ առանց հոտի զուտ եւ անխառնախ ձկան իւղ, թող հաճին դիմել դեղարան, գէթ մէկ անգամուան փորձով մը ստուգելու մեր խօսքերուն ճշտութիւնը:

Սոյն բազմամեայ դեղարանը, այս առգամ նոր կազմակերպութենէ մը ետքը, հաշիկ ֆէստեանի կողմանէ, քիչ առնուած մէջ պատիւը ունեցաւ զնոյն հաստատութենէն, որմէ քաջութեանով պէտքը կը զգայ իրեն ուղղութիւնը եւ նպատակը ներկայացնել հա՛տութեան:

ՆՊԱՏԱԿ.—Գոհ ձգել իր յաճախորդները միշտ՝ դեղերու թարմութեամբ, եւ արուեստին խղճամբ գործադրութեամբ:

ՈՒՂՂՈՒԹԻՒՆ.—Մաքրութիւն, ապանելու հարմարութիւն եւ պարկեշտութիւն դեղարանին սկզբունք եղած են:

Ներպական տան մը հետ բանակցած ըլլալով ամէն շաբթու պատուաստի թարմ քիւպիք (աւր գալիմի) կը հասնին բօսդայով:

Ամէն օր Դեղարան յաճախող Հոյ եւ օտարազգի բժիշկներէն յիշե՛ք մասնաւորաբար հանրածառնօթ Բժիշկ ԱԼԼԱՀԷՐՏԻ ԷՖ.՝ որ ամէն Գիշ. Ե. Ծր. օրեր ժամը 8—11 իրեն գիմու հիւանդները կը դարմանէ իրեն ծառայութեամբ եւ մասնագիտութեամբ, դեղարանին մասնաւոր դարմանատեղը: Դեղարանը ունի նաեւ ԳԻՇԵՐԱՅԻՆ ՍՊԱՍ: 2—10

ՍՈՒԹԵՆ ՕԳՈՒՏ ԻՍԼԱԵԼ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ՀԵՐՃԱՅԻ



ԱՊԱՌԻԿ ԵՒ ԿԱՆԽԻԿ ՎԱՃԱՌՈՒՄ

Գոհարեղեններու, ամեն օրուայ կան կարասներու եւ ամենեւնի նորաձեւ

հագուստներու, եւլն.

Պատիւ ունինք ծանուցանել պատուարժան հասարակութեան թէ մեր վաճառատանց ապրանքներուն տեսակները աւելի ճշմարտեմբարու ու մեր յարգելի յաճախորդաց աւելի գոհացում տալու նպատակաւ, ՈՍԿԵՐՉՈՒԹԵԱՆ վերաբերեալ ամէն տեսակ ապրանքներէ զառ. կրներու եւ այրերու համար եւ մեծ ու փոքր ամէն տարիքի յատուկ ՁԳԵՍՏԵՂԵՆՆԵՐՈՒ, ճերմակեղէններու եւ (թօհաֆիէ) ու միանգամայն ամէն տեսակ տառջնակարգ ԿԱՐԱՍԻՆՆԵՐՈՒ (ձեղունի լամպներ, օֆիսէներ եւ այլն.) ճոխ մթերանց մը հաստատած ենք. խիստ դիւրամատչելի գիններով. եւ կանխիկ ու ապառիկ պայմաններով:

Արդ՝ կը հրաւիրենք մեր համակրելի յաճախորդները. որ հոճին դիմել վերադառնալ վաճառատները, օրկէ տնտեսական անհուն գոհունակութեամբ պիտի մեկնին:

ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ գնողներու համար հարիւրին 20 կանխիկ եւ մնացեալ գումարին հարիւրին 5 շաբաթական վճարմամբ:
2. Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ:
3. Կանխիկ ծախում ապրանքներէն միմիայն ադամադրեալ գոհարեղէնները երբ գործածուած քայքայ անշուշտ մնացած ըլլան հարիւրին 10 զեղչով եւ կառնուին: Իսկ ապառիկ ծախում եւ անշուշտ մնացած միմիայն ադամադրեալ գոհարեղէններն ալ հարիւրին 15 զեղչով եւ կառնուին:

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

Յ. Գ. Նարաթական վճարմանց համար հաւաքիչներ ընդմիջող պատրաստ են:

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉԱՅ ՓՈՂՈՅ, ԹԻՒ 13 Կ. ՊՈԼԻՍ



ՌՕՍԻԱ - ROSSIA

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ



ՀՐԻԵՆ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1881 մարտ 20ի Կայս. Ուղարկուող արտօնուած

կնդրոնաւորին Բեղերսպուրկ, իրեն յատուկ շէնքը:

Ընկերութիւնը խիստ նպաստաւոր պայմաններով ապահովագրութիւններ կ'ընդունի ԿԵԱՆՔԻ վրայ, եւ ՀՐԻԵՆԻ, ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳՆԵՐՈՒ, ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՐԿԱԾՆԵՐՈՒ ԴԵՄ, ցկեանս ապահովագրութիւն ՇՈՒԿԵԱՌՔՈՎ ԵՒ ՇՈՒԿԵԱՌՔՈՎ ՈՒՂԵՒՈՐՈՒԹԵԱՆ ԱՐԿԱԾՆԵՐՈՒՆ ԴԵՄ, ինչպէս նաեւ ՀԱՅԵԼԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՊԱԿԻՆԵՐՈՒ ԿՈՐԱԵԼՈՆ ԴԵՄ:

Ընկերութեան դրամադրուելը, ամբողջապէս վճարուած

10,666,667 ֆրանք

երաշխաւորութեան գումար աւելի քան

142,585,000 *

Ընկերութեան ապահովագրողներուն վճարուած դրամա-

314,768,000 ,

գլուխ եւ վնասուց հատուցում

56,585,800 ,

1903 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին եւ տուրոս

Ամէն տեսակ տեղեկութեանց համար դիմել Կ. Պոլսոյ մասնաճիւղին, Ազարեան

խան, Վոյվատա, Ղալաթիա,